



ՀՅԴ Պատժարք



ԴՐՕՇԱԿ

ՀԱՅ ՅԵՂԱԲԱԾՈՒՄԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՈՒԻԹՅԱՆ
ՀԻՄՆԱԳՐՄԱՆ 115 ԵՎ 120-ԱՄՅԱԿՆԵՐԻՆ
ՆԿԻՐՎԱԾ ՓԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐ



«ԻՍՅ ԴԱՏ» ԵՄՏԵՆՇԱՐԻ ԹԻՎ 3

Հունիս N06 (1633)

2011





«Դրօշակ»

ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Յեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ ՀՅԴ

Գլխավոր խմբագիր՝
Ռուբեն Հովսեփյան

խմբագիր՝ Կ. Խանլարյան

Համակարգչային շարվածքը՝
Ս. Խաչատրյանի

Ձեռավորումը՝ Ա. Գրիգորյանի

Ոճը՝ Ս. Փարթամյանի

Գրանցման վկայական 897

Երևան, 375010, Միեր Սկրտչյան 12/1
Հեռ. 521 876
Էլ. փոստ. droshak@arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

“Droshak” monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepián**

12| 1 Mher Mkrтчian, Yerevan, 375010
Tel. 521 876
e.mail: droshak@arf.am

Հայսարարություն

ՀՅԴ 31-րդ ընդհանուր ժողովի հայսարարությունը 2

Սոցիալ-սնեսական

Տնեսական իշխանության հիմնախնդիր՝
«անարդյունավետ հավասարակշռության»
խախտման անհրաժեշտությունը 4

Տեսակետ

Հայոց հանդուրժողականության
և վճռականության մասին 10

ՀՅԴ -120

ՀՅԴ մարտավարության խնդիրներն ըստ 1895 թ.
Ընդհանուր-ռայոնական ժողովի որոշումների 15

Մեր մեծերը

Արամ Մանուկյան. ֆաղափական լիդերի
հոգեբանական դիմանկարի առաջ 25

Պատմության դասեր

Հայոց ղեկավարության պատմության
ուսանելի էջերից. Արցակ Բ 33

Օրացույց

Հովհաննես Լոռիս-Մելիքով 42

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Պատմական զարգացում (Մեր աշխարհայեացքի հիմքերը) 44

Նոր գրքեր

Հայ Յեղափոխական Դաշնակցության հիմնադրման 115 և
120- ամյակներին նվիրված գիտաժողովների նյութեր 46

Պատկերասրահ

Վահագն Ջիվանյան 48





ՀՅԴ

31-ԲԴ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԵ

Հանգամանալից քննության ենթարկելով Հայրենիքի և Սփյուռքի ազգային-քաղաքական իրավիճակը, Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության կարողականության լիարժեք օգտագործման հնարավորությունները, երկրի ներքաղաքական, սոցիալ-տնտեսական, բարոյահոգեբանական կացությունն ու դիմագրաված արտաքին մարտահրավերները՝ ՀՅԴ 31-րդ ընդհանուր ժողովը արձանագրում է.

1. Ինքնիշխան, ժողովրդավար, իրավական և սոցիալական պետություն կառուցելու, տարածաշրջանում և աշխարհում ազդեցիկ գործոն դառնալու մեր ժողովրդի նպատակը տակավին մնում է չիրագործված:

2. Սփյուռքը, շարունակելով անբարենպաստ պայմանների մեջ իր հայկական ինքնությունը պահպանելու ճիգերը, ստիպված է դիմագրավել լուրջ մարտահրավերներ, ինչը պահանջում է ներուժի կուտակման և միասնության առավելագույն աստիճան:

3. Արցախի հիմնահարցը շարունակում է մնալ չկարգավորված, ցայսօր չի հաջողվել միջազգայնորեն ամրագրել ԼՂՀ փաստացի անկախությունը, չի

ապահովվել մեզ պարտադրված պատերազմի արդյունքում նվաճված ռազմաքաղաքական ձեռքբերումների անշրջելիությունը:

4. Հայ-թուրքական հարաբերությունները, Թուրքիո կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման և պահանջատիրության հանդեպ ժխտողական կեցվածքի պատճառով, ի սկզբանե դատապարտված էին ձախողման: Անհրաժեշտ է Հայաստան-Թուրքիա արձանագրություններից Հայաստանի ստորագրության ետևանչամբ եզրափակել ներկա գործընթացը:

5. Հայաստանի Հանրապետություն՝

ա) գործող իշխանության սոցիալ-տրն-

տեսական քաղաքականությունը չի բխում բնակչության բացարձակ մեծամասնության շահերից:

բ) Խորանում է աղքատությունը, նվազում է վստահությունը ապագայի հանդեպ, արտագաղթի վտանգավոր միտում է նկատվում:

գ) Քաղաքական ու տնտեսական իշխանությունների սերտաճումը հանգեցրել է մենաշնորհների, ազատ մրցակցության բացակայության և սովերայնության մեծ ծավալների:

դ) Երաշխավորված չեն անհատի և հանրության իրավունքներն ու ազատությունները, լիարժեք քաղաքացիական հասարակություն չի կայանում, առկա բացասական բարոյահոգեբանական մթնոլորտը խոչընդոտում է Հայրենիքի լիարժեք քաղաքացու ձևավորմանը և սոցիալական առաջընթացին:

ե) Հայտարարված սկզբունքների և իրական կյանքի անհամապատասխանությունը հանգեցրել է պետականության ու իշխանության, ընտրությունների միջոցով ժողովրդի իշխանություն ձևավորելու հանդեպ անվստահության:

Մեկնելով այս հաստատումներից՝ Ընդհանուր ժողովը հայտարարում է.

ՀՅ Դաշնակցության քաղաքական օրակարգի գլխավոր առաջնահերթությունն ու համակուսակցական խնդիրը առաջիկա համապետական ընտրությունների նախապատրաստությունն է՝ նպատակ ունենալով համակարգային իշխանափոխությամբ նոր որակի իշխանության ձևավորումը, համակարգային բարեփոխումները, ազգային-պետական ուղեգծի և սոցիալական արդարության սկզբունքների արմատավորումը, քաղաքական համակարգի լիարժեք կայացումը, Հայաստանի արագընթաց զարգացումը:

Մենք վստահ ենք, որ Հայաստանի բնակչությունն ու աշխարհասփյուռ հայությունը կարող են մեկտեղել իրենց ուժերը և մեր հայրենիքի ու ժողովրդի համար արժանապատիվ ապագա երաշխավորել:

Մենք ի վիճակի ենք առանց զիջելու և վտանգելու համազգային ձեռքբերումները, նպատակներն ու շահերը՝ ապահովել հայրենիքի կայուն զարգացումը, ի նպաստ հայության կարգավորել Արցախի հիմնահարցն ու հայ-թուրքական հարաբերությունները, հետապնդել ցեղասպանության և հայրենագրկման հետևանքների արդարացի հատուցումը, պաշտպանել ջավախահայության օրինական իրավունքները:

Մենք կարող ենք նոր որակ հաղորդել Հայրենիք-Սփյուռք հարաբերություններին, փոխլրացնել միմյանց և աշխարհին ներկայանալ համայն հայության ներուժով: Հայրենիք-Սփյուռք հարաբերությունները պետք է ստանան առավել խորքային բնույթ: Սփյուռքի կազմակերպման և առավել քաղաքականացման ճիգը պետք է լինի տևական:

Մենք պարտավոր ենք Հայաստանը դարձնել հզոր, ժողովրդավար, սոցիալական արդարության վրա հիմնված, թռիչքաձև զարգացող պետություն, ուր ազատ անհատն ու համերաշխ հասարակությունը վստահությամբ կնայեն ապագային, կապրեն բարեկեցիկ, ստեղծագործ կյանքով: Մենք պետք է կարողանանք բացառել ներազգային պառակտումն ու թշնամանքը, վեր կանգնել անձնական ու խրմբակային շահերից, օրենքի իշխանություն և սոցիալական արդարություն հաստատել, երկիրը դուրս բերել զարգացման մայրուղի:

Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 20-ամյակի շեմին, ՀՅ Դաշնակցությունը վերահաստատում է իր կամքն ու վճռականությունը՝ բովանդակ ուժերով և աշխարհասփյուռ կարողականությամբ կարելին ու անկարելին անելու՝ հանուն հայ մարդու, հայ հավաքականության և հայկական պետականության անշեղ վերելքի:

ՀՅԴ 31-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
Ծաղկաձոր, 1 հուլիսի 2011թ.

Տնտեսական իշխանության հիմնախնդիրը՝ «անարդյունավետ հասարակչության» խախտման անհրաժեշտությունը

Աշոտ Եղիազարյան

«Գորբաչովյան վերափոխումների» ֆոնի վրա 1980-ական թվականների վերջերին ակտիվացավ այսպես կոչված «կոռուպտիվ» շարժումը: Երբեմնի երևանյան «ցեխավիկները» հայտնվեցին բավական բարենպաստ, կարելի է ասել, ինկուբացիոն պայմաններում: Այնպես, որ Հայաստանի անկախության արդեն առաջին իսկ տարիներին նրանք ազդեցիկ դիրքեր ունեին իշխանության համակարգում և ըստ էության հանդիսանում էին պետական քաղաքականության հիմնական գաղափարական կրողները: Իշխանության պատկերացումներում մանր սեփականատերերի այդ դասը ասոցիացվում էր «ազգային բուրժուազիայի» հետ, որը ՀՀԸ-ԱԺՄ «բարեփոխիչների» հայտարարությունների համաձայն պետք է ապահովեր հայ հասարակության և ընդհանուր առմամբ պետության առաջընթացը: Բայց հայկական բուրժուազիան ուներ լուրջ հիմնախնդիր: Նա շատ սահմանափակ էր իր ձգտումներում ու հնարավորություններում: Բացի այդ, նրանք կրեատիվ մարդիկ չէին, նրանց մեծ մասին հատկանշական էր քրեական-կոռուպցիոն վարքագիծը: Նոր բուրժուազիայի դիրքերը առաջ էին մղվում և ամրապնդվում խորհրդային ժամանակների փլուզվող արտադրական համալիրի նյութական բազայի յուրացման և պարզունակ օգտագործման հիմքի վրա:

Արդեն առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի կառավարման տարիներին հիմ-

նավորապես վերացվեցին արդյունաբերության մեքենաշինական և քիմիական համալիրները, գյուղատնտեսական համալիրը զանգվածային մասնավորեցման ճանապարհով փոշիացվեց ավելի քան 300 հազար մանր տնտեսությունների միջև: Պետական հատվածի և ընդհանուր առմամբ սոցիալ-տնտեսական համակարգի գոյատևումը մեծ չափով կախման մեջ էր միջազգային կազմակերպությունների վարկերից, օտարերկրյա օգնությունից և մասնավոր տրանսֆերտներից: Տնտեսության և հասարակության պարզունականացման գործընթացն իր տրամաբանական ավարտը գտավ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կառավարման տարիներին: Հենց Քոչարյանի կառավարման տարիներին, պետական սեփականության մասնավորեցման արդյունքում, կայացավ և վերջնականապես ձևավորվեց տնտեսական իշխանության գործող մոդելը և որպես հետևանք՝ անարդյունավետ տնտեսական համակարգը: Այդ համակարգը շարունակում է գործել առ այսօր, ավելի մեծ կենտրոնացման միտումներով:

Տնտեսական իշխանության ամրապնդմանը զուգահեռ մեր հասարակությունում էապես բարձրացավ անհավասարության մակարդակը: Սեփականատերերի նոր դասը սկսեց զբաղեցնել ավելի ու ավելի բարձր տնտեսական և քաղաքական դիրքեր և ենթարկեցնել ուրիշներին: Այդ ամբողջ գործընթացը ճշգրտվում և վերահսկվում էր

իշխանության բարձրագույն էշելոններում: Ձևավորվեց իշխանական բուրգ, որի գլխին կանգնած էր ինքը նախագահը: Իշխանությունը ընդհանուր առմամբ տնտեսականացվեց:

Հավասարությունը իրական տնտեսական կյանքում իհարկե ֆիկցիա է: Է. Տոֆլերը նշում է, որ «ամբողջ մարդկային կյանքը ավելի շուտ հանգում է իշխանական, քան դրամական հարաբերությունների»: Մյուս կողմից, ըստ տնտեսագետ-ինստիտուցիոնալիստների, ցանկացած իշխանություն պետք է վերահսկվի: Հասարակության տնտեսական կազմակերպման կառուցվածքից է կախված սոցիալական, տնտեսական և քաղաքական համակարգի որակը և զարգացման հնարավորությունները: Այդ կապակցությամբ ինստիտուցիոնալիստները առաջ են քաշում այսպես կոչված «իշխանության հասարակական անհրաժեշտ կարգի» (**socially necessary order**) հայեցակարգը: Գերմանացի տնտեսագետ Վ. Օյքենը գտնում է, որ իշխանության հիմնախնդիրը պետական տնտեսական քաղաքականության առաջին սկզբունքն է: Հարցը նրանում է, թե ինչպիսի իշխանության համամասնություններով պետք է օժտված լինեն տնտեսական սուբյեկտները և ինչ նպատակների ձեռք բերմանը պետք է ուղղված լինի նրանց գործունեությունը:

«Եվ ավելցուկային, և ոչ բավարար իշխանությունը հանգեցնում է ահավոր սոցիալական հետևանքների», - նկատում է Տոֆլերը: Հետևաբար, իշխանության համակարգի տեսանկյունից էական նշանակություն են ստանում որոշ հիմնարար հարցերի պատասխանները: Եթե այնպիսի հարցերի պատասխանները, ինչպիսիք են ո՞վ, ո՞ւմ վրա, ի՞նչ չափով, ի՞նչ սահմաններում և ինչպիսի՞ եղանակով է իրականացնում իշխանությունը, ինչ-որ կերպ պարզաբանված են կամ ակնհայտ, ապա այնպիսի հարցերի պատասխանները, ինչպիսիք են՝ տնտեսական գործունեության ի՞նչ տեսակներ է սահմանափակում իշխանությունը, ինչի՞ վրա է իշխանությունը ուղղում ռեսուրսները, ինչպիսի՞ հնարավորություններ է նա ստեղծում, պահանջում են ավելի խոր և հիմնարար բացատրություններ:

Միանշանակ է, որ Հայաստանում ձևավորված տնտեսական իշխանությունը ավելցուկային է ըստ տնտեսական գործունեության հիմնական տեսակների: Իր հերթին տնտեսական իշխանու-



Էլվին Տոֆլեր

թյան ավելցուկը ստեղծել է անարդյունավետ գործունեության «ավելցուկային» մոտիվացիա և արդյունավետ գործունեության «ճնշված» մոտիվացիա: Իշխանության ավելցուկը պայմանավորում է տնտեսական գործակալի կողմից ռենտային եկամուտների (գերշահույթի) ստացում, այսինքն լրացուցիչ եկամտի ստացում՝ իր ավելցուկային իշխանության հաշվին, որով տվյալ սուբյեկտը օժտված է տնտեսական համակարգում ժամանակի տվյալ պահին: Տնտեսական իշխանության ավելցուկը դրսևորվում է տարբեր ձևերով՝ հարկերի չվճարում, ներմուծման ոչ ֆորմալ քվոտաներ, ֆիկտիվ մրցույթներ, հանքերի և ամենաբերրի հողերի վերահսկում, իջեցված գներով գյուղատնտեսական մթերքների ձեռք բերման պայմանագրեր և այլն: Տնտեսական իշխանության ավելցուկը հանգեցնում է ծախսերի «տեղաշարժի» իշխանության սուբյեկտից դեպի օբյեկտ և ամենուր ստեղծում է աշխատանքի կոշտ շահագործում: Տնտեսական իշխանության այդպիսի համակարգը անարդար է եկամուտների բաշխման տեսանկյունից: Դա մի համակարգ է, որտեղ փաստացի բացակայում են «մարդու վրա ծախսերը», այսինքն առողջապահության, կրթության և սոցիալական ապահովության ծախսերը:

Իրականում եղածը թույլ զարգացած հասարակության համակարգ է, երբ տնտեսական իշխանության սուբյեկտ-կրողների փոքր խմբի և հասարակության հիմնական աղքատ զանգվածի միջև չկա ոչ մի միջանկյալ սոցիալական խումբ, որը ընդունակ լինի իր միջավայրից առանձնացնել արդյունավետ գործող տնտեսական և քաղա-

քական խմբեր: Տնտեսական գործակալների կողմից սուբյեկտիվ օգուտների մաքսիմալացմանն ուղղված անսահմանափակ ձգտման պայմաններում, գործող կենտրոնացված քաղաքական համակարգը ավելի շուտ նպաստում է այդ իշխանության անրապնդմանը, քան թուլացմանը և բաշխմանը: Կրթության ցածր մակարդակը ստեղծում է թույլ մտավորական միջավայր, որտեղ սրությամբ զգացվում է որակավորված աշխատողների, կառավարիչների, տեխնիկական կադրերի և աշխատուժի անբավարարությունը: Այդպիսի համակարգի դեպքում զարգացման հիմնախնդիրները ունեն ոչ միայն տնտեսական, այլև հումանիտար և մարդկային բնույթ:

Այսպիսով, տնտեսական գործակալները, որոնք օժտված են իշխանությամբ, ստանում են ռենտային եկամուտ, ինչում և կայանում է Հայաստանում ստեղծված տնտեսական և քաղաքական համակարգի ամբողջ իմաստը: Իշխանության ռենտան կարևոր պահ է այդ մոդելի հասկացման և պահպանման համար, և ընդհակառակը՝ ռենտայի վերացումը դրա փոփոխությանն ուղղված առաջին քայլն է: Ռենտային համակարգի վրա հիմնված իշխանությունը չի խրախուսում ներդրումները գործունեության այլ, ավելի բարդ տեսակներում, քանի որ այդպիսի գործունեության տեսակների ծախքերը և դրանց փոխհատուցման նորման բարձր են: Տվյալ պայմաններում անհիմաստ են արդյունաբերական քաղաքականություն իրականացնելու, առավել ևս ինովացիոն տնտեսություն ստեղծելու մասին խոսակցությունները: Գործունեության ոչ բարդ ոլորտներում գերշահույթներ ստանալու պայմաններում ճզմված են բոլոր տեսակի խթանները տնտեսության արտահանման կողմնորոշում ունեցող ճյուղերի զարգացման համար, բացառությամբ հումքի վաճառքի, ինչը ամբողջությամբ բացատրելի է օգտակար հանածոների համաշխարհային գների աճի ֆոնի վրա և իշխանության ռենտայի ստացման տեսանկյունից: Պղնձի, մոլիբդենի և ոսկու արդյունահանումն ու վաճառքը վերջին տարիներին աճում է չտեսնված ծավալներով: Պաշտոնական վիճակագրության համաձայն, տվյալ ճյուղերում գոյություն ունի 100%-անոց շահութաբերություն: Հումքի վաճառքը Հայաստանի արտահանման հիմնական հոդվածն է, նշանակում է նաև արտարժույթի ստացման հիմնական ներքին



Վոլտեր Օյբեն

աղբյուրը: Բայց, միաժամանակ, ճյուղն ապահովում է պետական բյուջեի եկամուտների չնչին մասը, իսկ ռեսուրսների շահագործումից ստացված եկամուտը վերածվում է նոր ներդրումների նոր հանքավայրերում, գիշատչորեն թալանելով մեր հայրենիքի ընդերքը, աղտոտելով ջրի աղբյուրները և հողերը վերածելով անբերրի տարածքների: Ինչպիսի՞ ալ ճյուղ, արտադրություն կամ գործունեության տեսակ կարող է բերել այդպիսի եկամուտներ: Բնական է, ոչ մի: Իսկ դա նշանակում է, որ տվյալ ճյուղում ստեղծված վիճակը լուրջ արգելք է տնտեսության դիվերսիֆիկացիայի համար:

Վերջին ժամանակներս, սննդամթերքի հիմնական տեսակների գների աճի ֆոնի վրա, գյուղատնտեսության թեման դարձել է ամենալայն արժարժվողներից: Բայց գյուղատնտեսության ի՞նչ զարգացման մասին կարող է խոսք գնալ այնպիսի այլասերված համակարգի դեպքում, որտեղ իշխում է տնտեսական իշխանությունը և միայն տնտեսականը, դրա «ավելցուկային ձևով»: Բոլոր քիչ թե շատ բարեբեր հողերը գտնվում են տնտեսական իշխանության ավելցուկով օժտված նույն տնտեսական գործակալների ձեռքերում: Հայտնի է, որ գյուղատնտեսությունում գոյություն ունի դիֆերենցիալ ռենտա հասկացությունը և որ գյուղատնտեսական արտադրանքի գները ձևավորվում են ամենավատ հողերի օգտագործ-

ման հիման վրա: Հողագործության ինչպիսի՞ արտադրողականություն կարող է լինել հազարավոր մանր կտորների բաժանված հողի վրա, համապատասխան ենթակառուցվածքների և կապիտալ ներդրումների բացակայության պայմաններում: Այդ պատճառով գյուղատնտեսական հողերի մեծ մասը մնում է չմշակված: Այսօր շահութաբեր օգտագործվում են միայն ամենաբերրի հողակտորները, որոնք ապահովում են հողային ռենտայի ստացում, այն էլ գյուղացիների հրեշավոր շահագործման, այլ ոչ թե լուրջ կապիտալ ներդրումների և տնտեսության կազմակերպման ժամանակակից մեթոդների կիրառման հաշվին: Այս ճյուղում գոյություն ունի առանձնահատուկ, կառուցվածքային բնույթի գործազրկություն: Առանց այդ հրատապ և պետականությանը սպառնացող հիմնախնդրի լուծման անհնար է պատկերացնել լուրջ զարգացում գյուղատնտեսության հատվածում: Բայց լուծելի է արդյո՞ք կառուցվածքային գործազրկության հիմնախնդիրը տնտեսավարման ներկայիս պայմաններում, երբ զարգանում են անարդյունավետ գործունեության ոլորտները և չկան նոր աշխատատեղերի ստեղծման խթաններ:

Ինչ վերաբերում է անասնաբուծությանը, ապա այն զարգանում է հիմնականում էքստենսիվ ճանապարհով, որի բնական հնարավորությունները շատ սահմանափակ են: Սահմանափակող գործոն են հանդիսանում նաև բնակչության ցածր վճարունակությունը, մսի և կաթի գնման ցածր գները: Գործունեության որոշ տեսակներ, օրինակ արհեստական ձկնաբուծությունը, շահութաբեր են մնում բացառապես արտեզյան ջրային ռեսուրսների անսահմանափակ և անվերահսկելի օգտագործման հաշվին:

1995-2008 թթ. ընթացքում տնտեսական աճի ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են շինարարության, առևտրի և ծառայությունների ոլորտներում: Այսպես, 2001-2008 թթ. ընթացքում շինարարության ճյուղի կշիռը ՀՆԱ-ի 10%-ից հասավ մինչև 27%-ի: Շինարարությունը ապահովում էր տնտեսական աճի մոտ 1/3 մասը, այսինքն՝ ավելի, քան արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը միասին վերցրած: Շինարարության հատվածի աճը պայմանավորված էր տնտեսական հիերարխիայի վերին օղակների ձեռքբերում դրամական միջոցների որոշակի ավել-

ցուկով: Այդ վերնախավը շահագրգռված և ընդունակ չէ կազմակերպել գործունեության արդյունավետ տեսակներ: Հասարակությունը, որտեղ թագավորում է տնտեսական իշխանությունը, ունի սպառողական հոգեբանություն, ինչը հատկապես ուժեղ է արտահայտված իշխանության վերնախավի մոտ: Հայտնի է, որ ծախսերի և օգուտների մեծությունը ազդում է գների մակարդակի վրա և ձևավորում է մի կողմից բարիքների նկատմամբ պահանջարկը, իսկ մյուս կողմից՝ դրանց առաջարկը: Այդ պատճառով, այնպիսի հատուկ ոլորտում, ինչպիսին է էլիտային շինարարությունը, ձևավորվում են հատուկ, բարձրացված և պղպջակային գներ: Դա իր հերթին ազդում է անշարժ գույքի շուկայի ընդհանուր իրավիճակի վրա: Գնագոյացման այդպիսի ձևը բնութագրական է նաև ապրանքների և ծառայությունների մի շարք այլ տեսակների համար:

Հարկ է նշել, որ վերջին տասնամյակի տնտեսական աճի համար մեծ նշանակություն են ունեցել մասնավոր տրանսֆերտները, որոնք 2008 թ. տվյալներով կազմել են ՀՆԱ-ի 9%-ը: Փորձագիտական տվյալների համաձայն վերջին տարիներին Հայաստանի տնային տնտեսությունները տարեկան արտասահմանից ստացել են մոտ 1,5 մլրդ. դոլարի մասնավոր դրամական փոխանցումներ: Այդ դրամական ներարկումները նպաստել են առևտրի և ծառայությունների զարգացման ոլորտում որոշակի մակարդակի պահպանմանը:





Ներկայիս տնտեսական համակարգի գործակալներն, իրենց հերթին, իշխանության օբյեկտ են արտաքին տնտեսական սուբյեկտների համար: Այսինքն՝ նրանց վրա կա արտաքին հարկադրանք: Ենթակառուցվածքային կազմակերպությունները, որոնք ապահովում են տնտեսական համակարգի կենսագործունեությունը (կապի, տրանսպորտի, էներգետիկայի, ջրամատակարարման, գազամատակարարման ոլորտներում) մասնավորեցվել կամ տրվել են անդրազգային կորպորացիաների (հիմնականում ռուսական) կոնսեսիոն կառավարմանը:

Տնտեսական իշխանության գործող համակարգին հատկանշական է այնպիսի ֆիսկալ համակարգ, որը մինիմալացնում է պետության իշխանությունը: Հարկեր-ՀՆԱ հարաբերակցությունում արդեն երկար տարիներ այդպես էլ չի նկատվում որևէ զգալի փոփոխություն: Եթե հաշվի առնենք,

որ գանձվող հարկերի ավելի քան կեսը կազմում են անուղղակի հարկերը (որոնք ըստ էության վճարում են սպառողները), ապա չենք չափազանցնի, եթե ասենք, որ Հայաստանի ամբողջ տարածքը, հարկերի առումով, իրենից ներկայացնում է ոչ ֆորմալ օֆշորային գոտի: Հարկման տեսանկյունից ստեղծված հավասարակշռված վիճակը շահավետ է ոչ միայն «ազգային կապիտալին», այլև անդրազգային կորպորացիաներին: Խաղի կանոնների իմաստով դա հանգեցնում է նրանց միջև կոնսեսուսի և ամրապնդում է ներկայիս հավասարակշռության անխախտելիությունը:

Օտարերկրյա ներդրումները 2000-2008 թթ. ընթացքում կազմել են մոտ 3 մլրդ. դոլար, կամ տարեկան միջին հաշվով ՀՆԱ-ի 6%-ը: Այդ ներդրումները հիմնականում ուղղվել են տրանսպորտի, կապի, էներգետիկայի, գունավոր մետալուրգիայի, հանքարդյունաբերության, առևտրի, շինարարության և ծառայությունների զարգացման ոլորտներ: Այդ ներդրումների մի մասը ապահովել են ռուսական և այլ օտարերկրյա ընկերությունների գործունեությունը: Ներդրումների մնացած մասը հիմնականում էթնիկ ծագում ունի: Էթնիկ ներդրումները իրենց հերթին մեծամասամբ ռուսական ծագման են: Ռուսաստանն ինքը ունի պարզունակ տնտեսական և սոցիալական կառուցվածք: Այդ երկրի տնտեսության հիմքը կազմում է հանքահումքային արդյունաբերությունը: Ռուսաստանի հայերը մուտք չունեն ռուսական հանքային ռեսուրսների դաշտ: Մյուս կողմից, համաշխարհային շուկաներում էներգառեսուրսների բարձր գները բավական մեծ արժույթային մուտքեր են ապահովում Ռուսաստանի համար, ինչը բարձրացնում է ռուսական հասարակության որոշակի մասի վճարունակությունը և խթանում է շինարարության ու առևտրի աճը: Հենց այս ճյուղերում էլ որոշակի եկամուտներ են վաստակում Ռուսաստանի հայերը, և Հայաստանի տնտեսության հենց այդ ճյուղեր էլ ուղղվում են նրանց ներդրումները: Վերջին հաշվով՝ Ռուսաստանում ձեռնարկատիրական գործունեության ոչ բարդ տեսակներից ստացված միջոցները հայրենիքում ներդրվում են գործունեության «անարդյունավետ ոլորտներում»:

Այսպիսով, կարելի է հաստատել, որ տնտեսա-

կան իշխանության ստեղծված համակարգը բացասաբար է ազդում տնտեսական գործակալների (տնտեսական վարքագծի որոշակի տեսակներից հրաժարման և ուրիշների ընտրության առումով) և ընդհանուր առմամբ Հայաստանի սոցիալ-տնտեսական համակարգի զարգացման վրա: Ձևավորված տնտեսական համակարգը չի հետապնդում որևէ ընդհանուր պետական նպատակ, այլ գործում է տնտեսական սուբյեկտների օգուտների մաքսիմալացման նպատակներով:

Արդյունքում՝ ստեղծվել է տնտեսական իշխանության համակարգի անարդյունավետ հավասարակշռություն, որի համար բնութագրական են տնտեսության պարզունակ կառուցվածքը, կախվածությունը արտաքին ֆինանսական աղբյուրներից, այլասերված ֆիսկալ համակարգը: Բոլոր այս գործոնները միասին վերցրած չեն կարող ապահովել երկարաժամկետ և կայուն զարգացում և խոցելի են դարձնում Հայաստանի տնտեսական և քաղաքական համակարգը:

Ինչպես արդեն նշվել է, տնտեսական իշխանությունը օբյեկտիվ անհրաժեշտություն է: Քաղաքական տեսանկյունից այն կարող է երկակի դեր խաղալ՝ պոզիտիվ կամ նեգատիվ: Առաջին դեպքում այն կարող է ապահովել մասնավոր տնտեսական վարքագծի ենթարկվածությունը ընդհանուր նպատակներին: Այս դեպքում այն հանդես է գալիս պոզիտիվ դերում և կարող է նպաստել ազգի տնտեսական զարգացմանը: Երկրորդ, տնտեսական իշխանությունը կարող է հետապնդել միայն տնտեսական սուբյեկտների օգուտների մաքսիմալացման նպատակ՝ այդ նպատակին այլ մարդկանց գործունեության նպատակների ենթարկեցման հաշվին: Այս դեպքում այն հանդես է գալիս նեգատիվ դերում և ստեղծում է ազգային տնտեսության անարդյունավետ համակարգ:

Ստեղծված անարդյունավետ հավասարակշռության խախտման համար հարկավոր է փոխել տնտեսական իշխանության կազմակերպական համակարգը: Արդյունավետ տնտեսական իշխանությունը չի ստեղծվում ինքն իրեն: Անհրաժեշտ է իրականացնել կառուցվածքային քաղաքականություն, ինչը ենթադրում է սուբյեկտիվ իշխանության և օգուտի մաքսիմալացման ձգտման արդյունքում ձևավորված տնտեսական իշխա-

նության վերաբաշխում: Իսկ դրա համար անհրաժեշտ է փոխել տնտեսական խաղի կանոնները: Տնտեսական խաղի կանոնները կարող են փոխվել նոր տնտեսական կազմակերպությունների («խաղացողների») ստեղծման և դրանց տնտեսական իշխանության պակաս մասի ծածկման միջոցով: Տնտեսական տեսանկյունից դա նշանակում է՝ գործունեության արդյունավետ տեսակների համար ծախսերի ծավալի մինիմալացում և դրանց մաքսիմալացում (հարկերի օգնությամբ) գործունեության անարդյունավետ տեսակների համար:

Այսօր գործունեության արդյունավետ տեսակների իրականացման համար գոյություն ունի «իշխանության պակաս»: Օրինակ, ինովացիաների նկատմամբ ընկալունակությունը բոլորից լավ է ցույց տալիս իշխանության համակարգի արդյունավետությունը: Եթե համակարգը սահմանափակում է ինովացիոն գործունեությունը, ապա դա նշանակում է, որ տնտեսական իշխանությունը անարդյունավետ է բաշխված, իսկ քաղաքական համակարգը թույլ է անկախ պետական քաղաքականություն իրականացնելու առումով:

Իշխանության ստեղծման և արդյունավետ բաշխման քաղաքականության իրականացումը ենթադրում է նաև տնտեսական իշխանությամբ օժտված սուբյեկտների իրավունքների և պատասխանատվության փոփոխություն այնպես, որպեսզի ստեղծվի իշխանության հասարակական անհրաժեշտ կարգ, ինչն էլ ըստ էության հանդիսանում է պետության տնտեսական քաղաքականության նպատակը:



ՀԱՅՈՑ ՀԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԵՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՃՈՒՄԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արծրուն Հովհաննիսյան

Վերջերս աղբբեջանցի պատգամավորներից մեկը ասել էր.

«Եթե անգամ յուրաքանչյուր սպանված հայի դիմաց նրանք սպանեն 10 աղբբեջանցի զինվոր, ապա միևնույն է մենք պիտի շարունակենք սպանել հայերին»:

Այս հայտարարությունը հետաքրքիր է մի քանի առումներով: Նախ՝ սանշանակում է, որ աղբբեջանցիները խոստովանում են, որ իրենք ագրեսիվ են ու միշտ նախահարձակ են լինում, հետո՝ սանշանակում է, որ իրենք մշտապես պատրաստվում են դրան ու այդ ուղղությամբ պետա-

կան ծրագիր է աշխատում, իսկ նման գոհերը իրենց իրականության մեջ կան և սովորական են: Աղբբեջանցի բարձր պաշտոնյան խոստովանում է, որ հայերը իրենց արժանի հակահարված են տալիս, սակայն իրենց համար սեփական երկրի զինվորները թնդանթի միս են և նրանք թքած ունեն հարյուրավոր ու հազարավոր կյանքերի վրա: Կարևորը նրանց համար այն է, որ մշտապես լարված իրավիճակ լինի, ու մշտապես հայեր գոհվեն: Չինվորական լեզվով ասած՝ նրանք նախաձեռնել և համառորեն վարում են հյուծման պատերազմ, որտեղ մարդկային կյանքը արժեք չունի: Այս մարտավարու-

թյունը բնականաբար աղբբեջանցիների, թուրքերի համար նոր երևույթ չէ, նրանք այսպես են եղել դեռ դարեր առաջ ու այդպիսին էին նաև Արցախյան գոյամարտի ժամանակ: Սանշանակում է, սակայն պահանջում է որոշակի վերլուծություն: Արցախյան գոյամարտի ժամանակ, երբ մեր ժողովուրդը կենաց ու մահու կռիվ էր տալիս իրեն միշտ թվապես գերազանցող ու լավ զինված հակառակորդի դեմ, իհարկե ողբալով ամեն մի գոհված հայորդու համար, համոզված էինք, որ յուրաքանչյուր հայ դյուցազուն մինչև գոհվելը մի քանի թուրք է

կոտորել: Հրադադարի պայմաններում ևս մեր պատվախնդիր զինվորականները յուրաքանչյուր զոհված հայ զինվորի համար բազմապատիկ հարված են հասցրել թուրքերին, ինչի մասին հավաստում է նաև այդ պատգամավորի խոսքը: Եվ մեզանում արդեն երկարամյա այս իրավիճակում մինչև վերջերս կար ձևավորված մի իրավիճակ-բնավորություն, որ մենք, ճիշտ է, կորուստներ կրում ենք, որովհետև հակառակորդը նենգ է, սակայն միանշանակ համապատասխան հարված ենք հասցնում: Այդպես, 1994 թ. հետո մենք սահմանների վրա ազգի անվտանգությունն ապահովող նվիրյալ զավակներից տարեկան կորցնում էինք մի քանի զինվոր, իսկ հակառակորդը տասնյակներ ու հարյուրներ, և կարծես թե սա մեզ համար որոշակի օրինաչափություն էր դարձել: Սակայն վերջերս, հիմնականում 2009-2011 թթ. տեղեկատվության թափանցիկության մեծացման հետ, կարծես հայ ժողովուրդը այս օրինաչափություն - բնավորության հետ չի ուզում համակերպվել:

Սա կարելի է բացատրել ինչպես մարդ - տեղեկատվություն ընկալումների փոփոխությամբ, այնպես էլ ազգային հատկանիշներով: Փորձենք մանրամասն վերլու-

ծել այս իրադրությունը:

Հայոց պետականության երկարամյա բացակայության ընթացքում հայ ժողովուրդն իր ավանդական արժեքային համակարգից, դատողությունից շատ առանցքային հատկանիշներ ու բնորոշիչներ կորցրեց: Պետականության ստեղծման երազանքի իրականացման և ազգապահպանության գործում, սկսած ինչ-որ ժամանակից, հայ ժողովուրդը փրկությունը միշտ տեսել է հյուսիսում՝ Ռուսաստանի մեջ, ինչը շատ բնական էր՝ հաշվի առնելով մի շարք հանգամանքներ: Մեր տարածաշրջանում երկար բացակայությունից հետո նորից վերադառնում էր քրիստոնյա տերությունը, որը նաև իր տնտեսությամբ, մշակույթով, օրենքներով և այլ բնագավառներով բավականին զարգացած էր համեմատած տվյալ ժամանակների գերիշխող Օսմանյան կայսրության և Պարսկաստանի հետ:

Ժամանակի ընթացքում մենք լինելով հիմնականում թուրք-պարսկական և արաբական ազդեցությունների տակ, նրանցից վերցրել էինք որոշակի հատկանիշներ: Ընկնելով ռուսական ազդեցության տակ՝ մենք վերջիններիցս ևս յուրացրեցինք նրանց հատուկ որոշ հատկանիշներ: Մասնավորապես, ռազմական գործում թե տնտեսավարման մեջ մեծ կորուստները օրինաչափ համարելը, դանդաղ կոտորությունը, անվճռականությունը,

պասիվ պաշտպանությունը և այլ կենցաղային ու ռազմական ոլորտի բնավորության մի շարք գծեր:

Փորձենք անդրադառնալ հենց առաջինին, որը կապ ունի հայ զինվորների մահվան դեպքերի ու քանակի հետ: Արաբները, ինչպես նաև պարսիկներն ու հատկապես թուրքերը, ռուսների նման լինելով մեծ կայսրություններ, ռազմավարության կամ մարտավարության մեջ որոշակիորեն, թեկուզ և տարբեր մակարդակով, մեծ կորուստները օրինաչափ էին համարում: Դա բնական էր, քանի որ նման կայսրությունները սովորաբար հիմնականում թալանում էին ու կեղեքում, դիզում մեծ հարստություններ, ունենում մեծաքանակ հպատակներ, որոնց կարող էին անհրաժեշտության դեպքում և հարստահարել, և կոտորել ցանկացած պատերազմում՝ օգտագործելով նաև որպես թնդանոթի միս: Այս բնավորությունը, իհարկե, հիմնված չէ միայն մեծաքանակ հպատակներ կամ սուրուկներ ունենալու վրա, օրինակ՝ ռուսական իրականության մեջ սա հիմնականում բխում է մեծ տարածքներ և տարատեսակ հսկայական միջոցներ ունենալուց: Ասիականության այս դրսևորումը ժամանակի հետ դառնում է ամուր

բնավորություն և հիմք կազմում պետական հայեցակարգի, ազգային անվտանգության հիմնադրույթի, զինվորականների ու այլ ստրատեգների դատողության ձևի: Բնականաբար նման միջավայրում մարդկային կյանքը չէր կարող մեծ արժեք ունենալ և պատերազմների ժամանակ մեծաքանակ մարդկային զոհերը համարվում էին ավելի շատ օրինաչափություն, քան բացառություն: Ահա այսպիսի մեզ համար խորթ միջավայրում ենք մենք ապրել երկար դարեր, մոռանալով, որ մենք դեռ հնագույն ժամանակներից, ելնելով մեր փոքր տարածքից և նյութական միջոցներից, բոլորովին այլ դատողություն ենք ունեցել: Հայոց գործի սպարապետների համար յուրաքանչյուր զինվոր համարվում էր մեծ արժեք, իսկ հայոց գործի գնդերից ամեն մեկը պետական մեծ նշանակություն ուներ: Հայոց պատմիչների գործերում մեծ տեղ է հատկացված այս կամ այն քաջարի զորավարին և նրանց կորուստը ներկայացված է որպես մեծ փորձանք ամբողջ հայ ժողովրդի համար: Ցանկացած հայ գրքերից լավ

զիտե, թե ինչպիսի ողբերգություն էր հայրուկների մահը ժողովրդի համար, իսկ արցախյան գոյամարտում զոհված տղաների համար ինչպիսի սուգ էր լինում: Սա լինվին բնական է մի փոքրաթիվ ժողովրդի համար, որը մեծ զոհերի հնարավորություն օբյեկտիվորեն չունի: Բացի դրանից, մեր ազգային արժեհամակարգով յուրաքանչյուր մարդու մեջ մենք տեսնում ենք շատ կարևոր անձի, քաղաքացու, ապագա լավ մասնագետի ու անգամ տաղանդավոր մարդու: Այսինքն՝ մենք բարձր ենք գնահատում մարդ արարածին: Ահա թե ինչու մեզ համար մեծապես խորթ են մեծ կորուստները: Սակայն խորթ թե սովորական՝ մենք ստիպված ենք եղել ապրել ու պատերազմել նման պայմաններում և ժամանակի հետ որոշակիորեն փոփոխություն ենք կրել:

Երբ մենք մեր պատերազմն ենք վարել մեր դատողությամբ ու մեր միջավայրում մենք նորից մեզ ենք նմանվել: Չնայած նրան, որ անգամ մեզ իշխող կայսրությունների բանակներում մեր զորավարները լավագույնն էին այս առումներով, միևնույն է, նրանք իրենց բնավորության մեջ արդեն շատ բան էին կրում այդ համակարգից¹: Ժամանակի հետ ազգային հիմքերի վրա

կանգնած ռազմավարական մտքի անընդհատականության խզումը բերեց որոշակի շեղումների: Ահա այդ շեղումների արդյունքում էր, որ մեզանում որոշ օրինաչափություն էր համարվում հայ զինվորների մահը սահմանի վրա: Սակայն այս օրինաչափությունը հայ տեսակի արմատներին վերադարձի հետ կամաց-կամաց փրշրվում է: Անկախության ներկայիս պայմաններում հայ տեսակը, չնայած բազում դավերին ու ապագային խարդավանքներին, կամաց-կամաց վերագտնում է իրեն:

Այստեղ տեղին է մի համեմատություն անել Իսրայելի հետ. հրեական պետության և բանակի ղեկավարությունը, մշտապես բարձր գնահատելով յուրաքանչյուր զինվորի կյանքը, մեկ անգամ չէ, որ սահմանափակ քանակությամբ սեփական զինվորների կյանքի փրկության համար ազատ է արձակել հարյուրավոր ռազմագերիների կամ անգամ ռազմագործողություններ է իրականացրել: 1956 թ. պատերազմից հետո ընդամենը չորս հրեա ռազմագերիների ազատ արձակելու դիմաց

1. Բյուզանդական, ղարսկական, ռուսական և այլ բանակներում հայ զորավարները ամենասաղանդավորներն էին, ամենափչ զոհերը հայերն էին սալխա, և այլն: Օրինակ՝ աղագա մարշալ Բադրամյանի ռազմաճակատը աչքի է ընկել իր փչ զոհերով, գեներալ Խանփեյանցը խորհրդային ավիացիոն հրամանատարներից ամենափչն է կորուսներ սվել մեծ ռազմագործողությունների իրականացման ժամանակ, և այլն:

հրեաները բաց թողեցին 5500 արաբի: Նման դեպքեր շատ են եղել²: Հետաքրքիրն այն է, որ նման դեպքերը ոչ նույն հարաբերությամբ, սակայն օրինաչափությամբ կրկնվել են նաև Արցախյան զոյամարտի և անգամ ներկայիս հրադարի տարբեր ժամանակներում:

Ներկայումս հայ տեսակը հայրենիքում թե այլուր քիչ-քիչ մոտենում է իր արմատներին, վերագտնում իր ազգային դեմքը և այս հարցում դառնում ավելի անողորմ անզիջում: Սահմանի վրա տեղի ունեցած վերջին միջադեպերը ցույց տվեցին, որ հայ ժողովուրդը ավելի պահանջատեր և անզիջում է դառնում, այլևս պատրաստ չէ օրինաչափ համարել հակառակորդի կրակից զոհված ոչ մի զինվորի կամ սովորական քաղաքացու մահը³: Նման հասարակությունը պատրաստ է իր յուրաքանչյուր զավակի կյանքը փրկելու համար համազգային զոհաբերության գնալ: Ահա այն բարձր հոգեվիճակը, որ Կաններ, Գավգամելաներ ու Սարդարապատներ է ծնել: Նման իրավիճակում, երբ մենք ձերբա-

զատվում ենք այնպիսի չարարմատ բարդությից, ինչպիսին է հանդուրժողականությունը, մենք պետք է շանտեսենք նաև այդ հատկանիշի մեկ այլ «հարազատին»՝ պասիվությանը, դանդաղկոտությանը, աննախաձեռնողությանը կամ, ընդհանրացված ասած, անվրճռականությանը: Մենք վերնարդեն նշել էինք վճռականության պակասի մասին, ինչը ևս ձեռքբերովի արատ է, որի մահը մոտենում է:

Այլոց հատուկ է այն հատկանիշը, որ մեզանում արդեն թևավոր խոսք դարձած, ոմանց կարծիքով, բնորոշում է մեր ազգին: Խոսքը վերաբերում է «Դանակը մինչև ոսկորին չհասնի՝ տեղից չի շարժվի» արտահայտությանը:

Մենք ներկայումս ևս մեծապես խուսափում և խորշում ենք պատերազմից, թեև աշխարհը հազարավոր տարիներ այն անվանում է քաղաքականության իրականացման մի լծակ, ազատագրական գործողություն, «խաղաղության ստիպելու ռազմագործողություն», «դեմոկրատիայի տարածում» և այլն: Արևմուտքում չբավարարվելով այս հին անվանումներով՝ հիմա էլ նոր տերմին են հորինել՝ «առաջ մղված պաշտպանություն» (time of parenthesis): Ներկա-

յումս, երբ մեզանից արդեն մեկ անգամ պարտված Ադրբեջանը հոխորտում է նոր ագրեսիայի սանձազերծման մասին, կամ հայության դեմ պատերազմը տեղափոխում այլ հարթություններ, մենք ընդամենը պատասխանում ենք պաշտպանվողի կեցվածքով:

Մեր պետական գործիչները, իսկ ամենազարմանալին այն է, որ անգամ զինվորականները, մտածում են պասիվ, պաշտպանողական կեցվածքով: Նրանք բոլորը կարծում են, որ պատերազմը քաղաքականության սխալն է, անկարողության արդյունքը և այլն: Մենք կոչ չենք անում ցանկացած հարց լուծել պատերազմով, սակայն հրաժարվել դրանից և համարել ամենաճարահեղ միջոց, նշանակում է պաշտպանողական սխալ կեցվածք ընդունել: Շատ փոքր պատերազմներ են եղել, որոնք կանխել են ավելի մեծերը, սա էլ է քաղաքականության վարման խնդիր: Պետությունների և հատկապես ազգերի միջև եղած հիմնարար խնդիրները հիմնականում որոշվում են պատերազմով: Մարդն իր բնույթով առանց պատե-

2. Վերանյան Կ., Զինվորականի դերը Իսրայելում: «Հանրադատական», թիվ 10 (74), 2009, էջ 39-44:
3. Վերջերս աշխարհի տարբեր հասվածներում երիտասարդ հայերի հաճախակի ցույցերը, բախումները թուրքերի հեռ և անգամ զոհերը, ակնհիշողաբար սոցցանցերում աղաչուցում են, որ ազգային ոգին և արժանապատվությունը մեծ վերածննդի նախաբանին է: Գաղսնիխ չէ ոչ մեկի համար, որ 1990-2000-ականները այդ առումով մեծ կորուստների և նահանջի ժամանակներ էին և ներկայումս էլ դեռ մեծ է աղազային ուժերի ազդեցությունը:

րագմի չի կարող, և հրաժարվել պատերազմներից անհնաստ է: Այդ ամենը բացառիկ ընդգրծվածությանը անհնաստ և անհիմն է հատկապես ներկայումս, երբ ակրնհայտ է դառնում, որ պատերազմի և խաղաղության սահմանները օր-օրի ավելի պայմանական և աննկատելի են դառնում: Պատերազմը ռազմադաշտերից առանց ժամանակային խզման տեղափոխվում է այլ հարթություններ: Հենց այս հրամայականն է ստիպում մեզ ուշադրություն դարձնել նորօրյա զարգացումներին, պատերազմների նոր տեսություններին, լինել ավելի ճկուն, մարտահրավերներին արագ արձագանքել⁴:

Եվ սա այն դեպքում, երբ վաղուց ապացուցվել է, որ զուտ պաշտպանվելը սխալ է: Խրամատային ամուր, պասիվ պաշտպանությունը, որը կարծրատիպ է դարձել, արդեն չի կարող ապահովել հուսալի պաշտպանություն⁵: Հարձակողական դատողությունը հակամարտության ժամանակ դառնում է գերակայող⁶: Նույնիսկ մեր սեփական պատմությունը ակնհայտորեն ապացուցում է դա: Ար-

ցախյան գոյամարտի ժամանակ, բոլոր հարձակողական գործողությունների ժամանակ ավելի քիչ մարդ ենք կորցրել, քան 1993-1994 թթ. թուրքական լայնածավալ հարձակումը հետ մղելիս:

Մենք պետք է լավ յուրացնենք այն պարզ ճշմարտությունը, որ սովորաբար նման իրավիճակներում (մեծ բախումներ, պատերազմներ, ճգնաժամեր, հասարակարգերի փոփոխություններ և քաղաքական այլ տեղաշարժեր) բախտ է վիճակվում փոքր ազգերին լուծելու իրենց հիմնական խնդիրները: Հիշենք, թե երբ ձեռք բերեցինք մեր վաղեմի երազած անկախությունը. Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ: Հրեաներն իրենց անկախությունը ձեռք բերեցին Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Հենց նման ժամանակներում են ամենաշատը աճել փոքր պետությունները:

Նման իրավիճակներից, մեծ պատերազմներից ու ցնցումներից վախենում են անհամարձակները, այն երկրները, այն ազգերը, որոնք իրենց չեն նախապատրաստել հզոր ցնցումների: Ճշմարիտ ուղի ընտրած երկրները սովորաբար գնում են այլ ճանապարհով, որպեսզի իրենց աստեղային

ժամին կատարեն երազանքի իրականացումը: Հենց այս նպատակին պիտի ծառայեն ազգային ընտրանու միտքն ու գործը: Այս ուղղությամբ պիտի աշխատի հայ դիվանագետը, գիտնականը, զինվորականն ու անգամ սպորտսմենը, բոլորը...

Պեսիմիստը դժվարություն է տեսնում յուրաքանչյուր հնարավորության դեպքում, իսկ օպտիմիստը յուրաքանչյուր դժվարության մեջ տեսնում է հնարավորություն:

Ուիլսոն Զերչիլ

Իրեն վերագտնող, ազգային արմատներին մոտեցող հայը կհաղթահարի հանդուրժողականության բարդույթը, վճռականության պակասը: Առնվազն կույր պետք է լինել չնկատելու այս ավետաբեր ծնունդը. հայ երիտասարդը իր հայրենիքի տերն է դառնում՝ դեռ նետելով գաղթականության խարանդ:

4. Այս մասին մանրամասն տե՛ս Арзуманян Р.В., Определение войны в 21 веке, Обзор XXI ежегодной конференции по стратегии Института стратегических исследований Армейского военного колледжа, 6-8 апреля 2010. Ереван, 2011; Արզումանյան Հ., Պատերազմի ժամանակները և արևմտյան ռազմական մշակույթը: Ռազմավարության և անվտանգության հարցեր: Հայրենասիրություն, Մասենաբար-2, Արմեն Այվազյանի խմբագրությամբ, Եր., 2007, էջ 415-469:

5. И. Н. Воробьев. Какие войны грозят нам в будущем веке? Военная мысль. N 2. 1997, стр. 18-24.

6. С. Л. Печуров. Революция в военном деле: взгляд с Запада. Военная мысль. N 4. 1997, стр. 73-80.

ՀՅԴ մարտավարության խնդիրներն

ըստ 1895 թ.

Ընդհանուր-ռայոնական ժողովի որոշումների

Համլեռ Գևորգյան

Եթե զուտ գործնական առումով արժևորենք Հ.Յ. Դաշնակցության գործունեությունը ազգային-ազատագրական պայքարում, ապա աներկբա պիտի ընդգծել, որ ՀՅԴ-ն իր գործունեությունը Արևմտյան Հայաստանում, ըստ էության, ծավալել է Սասունի 1894 թ. դեպքերից հետո: ՀՅԴ գործունեության մեջ տեղի ունեցած արմատական տեղաշարժը, առավելապես մարտավարական բնույթով, կարելի է ասել, պայմանավորված էր հիմնականում հետևյալ հանգամանքներով.

1. Արտաքին՝ կապված Հայկական հարցի նկատմամբ եվրոպական տերությունների դրսևորած վերաբերմունքի հետ:

Ինչպես հայտնի է, Սասունում տեղի ունեցած դեպքերը տեղում ուսումնասիրելու նպատակով առաջին անգամ 1895 թ. հունվարին այնտեղ են ժամանում եվրոպական տերությունների ներկայացուցիչները: Սասունում

կատարած ուսումնասիրությամբ համոզվելով, որ հայության նկատմամբ իրոք կատարվել էր ոճրագործություն, նրանք սուլթան Համիդին են ներկայացնում հայկական նահանգներում բարեփոխումներ անցկացնելու ծրագիր (1895 թ. Մայիսյան ծրագիր):

Սասունի 1894 թ, ողբերգական դեպքերը, ապա նաև արևմտահայության զանգվածային կոտորածները միանշանակորեն հաստատում էին, որ հայ ազգային կուսակցությունները, որոնք կոչված էին առաջնորդելու արևմտահայության ազատագրական պայքարը, այդ ժամանակաշրջանում անպատրաստ էին և ի գործու չէին կազմակերպել արևմտահայության ինքնապաշտպանությունն ու խոչընդոտել թուրք իշխանություններին՝ կենսագործելու ծրագրած հայաջինջ քաղաքականությունը:

Եվրոպական տերությունների միջամտությունը, Հայկական հարցի վերաբացումը որոշակի հույսեր են արթնացնում ոչ միայն ջարդերի սարսափում ապրող հայության, այլև ազգային կուսակցությունների, մասնավորապես ՀՅԴ-ի շրջանում:

Երրորդ ուժին ապավինելը, այն է՝ եվրոպական տերությունների աջակցությամբ Հայկական հարցի լուծումը, հայկական նահանգներում բարեփոխումների իրականացումն ու դրանով իսկ ջարդերի կանխումը կուսակցությունների քաղաքական կողմնորոշման, նրանց որդեգրած ռազմավարության կենսագործման հարցում ձեռք են բերում առաջնահերթ նշանակություն:

2. 1894-96 թթ. համիդյան «արյունոտ» քաղաքականության ծավալման ժամանակահատվածում հայ ազգային կուսակցությունների, մասնավորապես ՀՅԴ գերխնդիրը, բնականաբար, պիտի լիներ արևմտահայության ինքնապաշտպանության կազմակերպումը: Այդ խնդրի կենսագործումը Հ.Յ.Դաշնակցության գործունեության մեջ անհրաժեշտաբար պետք է ձեռք բերեր ռազմավարական նշանակություն, որի իրագործման համար անհրաժեշտ էր մշակել և որդեգրել ժամանակաշրջանի առանձնահատկություններից



Աբրո

բխող մարտավարություն: Եթե Հ.Յ. Դաշնակցության գործունեության առաջին շրջանը (1890-1895) Հ. Տասնապետյանի բնորոշմամբ «...բիրեղացման, կազմակերպման եւ տարածման շրջան» էր, ապա ՀՅԴ գործունեության երկրորդ շրջանը, որը պայմանավորված է 1894-96 թթ. համիդյան «արյունոտ» քաղաքականությամբ, կարելի է սահմանել որպես ինքնապաշտպանության, մարտական ու զինակիր խմբերի կազմակերպման և հայրուկային-պարտիզանական կռիվների ու ահաբեկչական գործողությունների շրջան:

Մինչև 1895 թ. Հ.Յ.Դաշնակցություն կուսակցությունն առաջնորդվելով 1892 թ. գումարած 1-ին Ընդհանուր ժողովի կողմից հաստատված Ծրագիր-կանոնագրում ամրագրված ծրագրային հիմնադրույթներով, այն է՝ «...ապստամբութեան միջոցով Տաճկահայաստանում ձեռք բերել քաղաքական եւ տրնտեսական ազատութիւն...»¹, իր գործունեությունը գլխավորապես ծավալել է Արևմտյան ու Արևելյան Հայաստանի, ինչպես նաև արտերկրի մի շարք հայաբնակ վայրերում կու-

1. Տասնապետեան Հ., Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութունէն մինչեւ Ժ Ընդհ. ժողով (1890-1924), էջ 23:

սակցական կառույցներ հիմնելու և ազատագրական պայքարի գաղափարները հայության շրջանում քարոզելու ուղղությամբ:

Այդ ժամանակահատվածում Հ.Յ. Դաշնակցության գործունեությունը հիմնականում նպատակաուղղված էր կենսագործելու հետևյալ խնդիրները.

Ապակենտրոն կազմակերպական կառույցների հիմնում: Այդ նպատակով Արևմտահայաստանի մի շարք շրջաններն են գործուղվում ՀՅԴ գործիչներ, որոնք պիտի կուսակցական մարմիններ (խումբ, ենթակոմիտե, կոմիտե, կենտրոնական կոմիտե) հիմնեին իրենց հանձնարարված շրջաններում:

Համաձայն ՀՅԴ 1-ին Ընդհանուր ժողովի ընդունած որոշման, կուսակցական կառույցները պիտի գործեին ապակենտրոն սկզբունքով, իսկ «...գործող կոմիտեներին կապում, միացնում է Ընդհանուր ժողովը, որը մշակել է ներկայ ծրագիրը (ՀՅԴ ծրագիր - Հ.Գ.), որի վճիռները պարտադրեցուցիչ են բոլորի համար...»²:

Պիտի նշել, որ ի տարբերություն հայ ազգային մյուս կուսակցությունների՝ Արմենական ու Հնչակյան, որոնք գործում էին կենտրոնացման սկզբունքով, Դաշնակցությունը շնորհիվ հենց ապակենտրոն սկզբունքով գործող կառույցների, կարողացավ առավել դյուրին անրապնդվել և գործել Արևմտյան Հայաստանում:

Մինչև 1895 թ. Հ. Յ. Դաշնակցությունը իր կազմակերպական կառույցները հիմնել է Արևմտյան Հայաստանի Բիթլիսի (Տարոն, Սասուն), Վասպուրականի (ք. Վան, Հայոց ձորի, Շատախի շրջաններում) և Էրզրումի նահանգներում: Տարոնում ու Սասունում գործում էին ՀՅԴ «Դուրան-Բարձրավանդակ», իսկ Վասպուրականում «Շամ» կենտրոնական կոմիտեները: Էրզրումի նահանգում Դաշնակցությունը նույնպես հիմնել է կուսակցական կառույցներ, սկզբում «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ղեկավարներից Հովհաննես Աստուրյանի, ապա Տիգրան Օրոնյանի և Ռոստոմի գործուն մասնակցությամբ:



Արամ Արամյան

Հայտնի է, որ Հ.Յ. Դաշնակցությունը 1-ին Ընդհանուր ժողովում ընդունած ծրագրում ոչ միայն անրագրել էր կուսակցության «Յեղափոխական նպատակը», այլև գործունեության 11 կետերից բաղկացած մարտավարությունը (Միջոց-տաքտիկան), որոնց մեջ էին.

«Պրոպագանդա անել Դաշնակցութեան գլխաւոր սկզբունքների, նպատակի եւ գիտակցական վերաբերութեան համար դէպի յեղափոխական գործ...»

3. Ամեն միջոց գործ դնել թէ՛ խօսքով եւ թէ՛ գործով բարձրացնելու ժողովրդի յեղափոխական գործն ու ոգին...»³:

Առաջնորդվելով Ընդհանուր ժողովի ընդունած որոշումներով՝ ՀՅԴ ապակենտրոն կուսակցական կառույցները և դրանցում ընդգրկված գործիչներն ու անդամները պիտի աշխատեին ժողովրդի մեջ տարածել ազատության և պայքարի գաղափարները, բարձրացնեին նրա մարտական ոգին ու պայքարի տրամադրվածությունը, այսինքն՝ գաղափարական, բարոյա-հոգեբանական և մարտա-

2. Նիթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Բ, էջ 1:

3. Նույն տեղում, էջ 15:

կան պատրաստվածության առումով արևմտահայությանը նախապատրաստեին դիմագրավելու սպասվելիք արհավիրքները:

3. Ժողովրդի զինում, մարտական խմբերի կազմակերպում:

Իր ընդունած ծրագրում ամրագրելով կուսակցության «Յեղափոխական նպատակը», Հ.Յ. Դաշնակցությունը բնականաբար պիտի մարտավարության հարցում առանձնահատուկ ուշադրություն դարձներ մարտական խմբերի ու ժողովրդի զինման խնդիրներին:

Ըստ կուսակցության որդեգրած մարտավարության, անհրաժեշտ էր.

«2. Կազմակերպել մարտական խմբեր...

4. Ամեն միջոց գործ դնել ժողովրդին զինելու...

6. Ճանապարհներ հաստատել մարդիկ ել գլնք տեղափոխելու համար...»⁴:

Հ.Յ. Դաշնակցությունն իր գործունեության սկզբնական շրջանից սկսած (1890 թ.) մինչև 1895 թ., կազմավորել և երեք հիմնական ուղղությամբ Երկիր է ուղարկել հետևյալ մարտական ու զինատար խմբերը.

Ա. Կարս-Էրզրում, Կարս-Խնուս-Մուշ և Կարս-Ալաշկերտ-Սասուն ուղղությամբ.

1. Արաբոյի (Առաքել), 1890 թ. (Կարս-Ալաշկերտ-Մուշ)

2. Հունոյի (Հարություն Աղա Տեր-Մարտիրոսյան), 1890 թ. (Կարս-Ալաշկերտ)

3. Մարգար Վարժապետի (Հեսու, Վկա), 1891 թ. (Կարս-Ալաշկերտ-Մուշ)

4. Թաթուլի (Արամ Արամյան), 1891 թ. (Կարս-Էրզրում)

5. Տուրքախի (Հարություն Կիրակոսյան), 1892 թ. (Կարս-Խնուս)

6. Ջալլադի (Երվանդ Բաբերյան), 1892 թ. (Կարս-Ալաշկերտ-Մուշ)

7. Արաբոյի 2-րդ խումբը, 1893 թ. (Կարս-Ալաշկերտ-Մուշ-Սասուն)

8. Դզրլաղաճաց Պողոսի, 1894 թ. (Կարս-Ալաշկերտ-Մուշ-Սասուն)

9. Շենիքցի Ստեփանի, 1894թ. (Կարս-Ալաշկերտ-Մուշ-Սասուն)

10. Թաթուլի և Հրայր Դժոխքի, 1895 թ. (այս խումբը գործել է հիմնականում Բասենի,



Հրայր Դժոխք

Խնուսի շրջաններում և չի կարողացել անցնել Տարոն ու Սասուն)

11. Աբրոյի (Մկրտիչ Սահակյան), 1894 թ. (Կարս-Խնուս-Մուշ)⁵.

Բ. Պարսկաստանի Ատրպատականից (Սալմաստ-Շատախ, Սալմաստ-Վան, Սր. Թաղեի վանք-Բերկրի-Վան) ուղղությամբ.

1. Պետոյի (Ալեքսանդր Պետրոսյան), 1891 թ. (Սր. Թաղե-Վան)

2. Վարդանի (Սարգիս Մեհրաբյան), 1894 թ. (Սալմաստ-Շատախ)

3. Սևքարեցի Սաբոյի (Սարգիս-Սարիբեկ Ծովանյան), 1894 թ. (Սր. Դերեկ-Վան)

4. Նիկոլ Դումանի (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան), 1894 թ. (Սալմաստ-Վան).

Գ. Արարատյան դաշտից (Երևան-Վասպուրական-Ախլաթ)

1. Իշխանի (Հովսեփ Արղության - Տաշո), 1894 թ. (Երևան-Սր.Թաղևոս-Բերկրի-Վան)⁶:

19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբների հայ ժողովրդի ազգային-ազատագրական

4. Նույն տեղում:

5. Տե՛ս ՀՅԴ ԿԱ, քժ. 685, գ. 2, էջ 1-2:

6. Նույն տեղում:

պայքարի պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեպետ հայ ազգային կուսակցությունները, մասնավորապես Հ.Յ. Դաշնակցությունը կարողացել էր պայքարի որոշակի փորձառություն ձեռք բերել ու մարտական խմբեր ուղարկել Արևմտյան Հայաստանի գանազան շրջանները, սակայն պիտի փաստել, որ 1895 թ. հայկական կոտորածների ժամանակ վերոհիշյալ մարտական խմբերի առաջնորդներից՝ վտանգված շրջաններում եղել են՝ Վանի նահանգում Պետոն, Նիկոլ Դումանը, Վարդանը, իսկ Թաթուլն ու Հրայր Դժոխքը գործել են Բասենի և Խնուսի շրջաններում:

1895 թ. Հ.Յ. Դաշնակցության գործունեությունում սկսվում է որակական մի նոր շրջան, երբ կուսակցությունը իր դեռևս նոր ձևավորված կազմակերպական կառույցներով պիտի կենսագործեր կենսական նշանակության այնպիսի կարևորագույն նշանակություն ունեցող խնդիրներ, որոնք պայմանավորված էին ժամանակաշրջանի առանձնահատկությամբ ու թելադրանքով, Արևմտյան Հայաստանի ու ընդհանրապես Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող հայության իրական կացությամբ:

Արևմտյան Հայաստանի, ինչպես նաև Օսմանյան կայսրության մյուս հայաբնակ վայրերի հայությունը զինված ու կազմակերպված չէր, ինչն աներկբա նշանակում էր, որ կոտորածները շարունակվելու դեպքում պատրաստ չէր ինքնապաշտպանության:

Սասունի 1894 թ. դեպքերից հետո, ճիշտ է, կատարվածը տեղում ուսումնասիրելու ու համապատասխան եզրահանգումների կատարելու նպատակով եվրոպական տերությունների ներկայացուցիչներն այցելել էին կոտորածի վայրերը, սակայն անցել էին ամիսներ և Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակը ցույց էր տալիս, որ հայությանը սպառնում էին անխուսափելի կոտորածներ:

Համանման իրավիճակում Հ.Յ. Դաշնակցությունը ժամանակաշրջանի հրամայականի թելադրանքով, անհրաժեշտաբար իր ուշադրությունն ու կարելիությունը պիտի կենտրո-



Իշխան Արղության

նացներ հայության համար կարևորագույն ու հրատապ նշանակություն ունեցող խնդրի, այն է՝ հայության ինքնապաշտպանության կազմակերպման վրա, ընդամին կյանքի կոչեր ժամանակաշրջանի պահանջներին համահունչ կենսունակ և գործող մարտավարություն:

Գործունեության ինչպիսի՞ մարտավարություն պիտի ընտրեր Դաշնակցությունը, որ կարողանար իր կարողությունների ու հնարավորությունների սահմաններում կազմակերպել արևմտահայության ինքնապաշտպանությունը և կանխել ջարդերի սպառնալիքը:

Մինչև 1895 թ. ՀՅԴ-ն չէր գումարել մեկ այլ Ընդհանուր ժողով և 1-ին Ընդհանուր ժողովում ընդունված մարտավարությանը վերաբերող 11 կետերը մնացել էին անփոփոխ: Քանի որ Օսմանյան կայսրությունում սուլթան Աբդուլ Համիդի քաղաքականության հետևանքով հայության գլխին ծառացել էր ջարդերի սպառնալիքը, հետևաբար ՀՅԴ-ն իր գործունեությունում պիտի առաջնորդվեր կամ 1-ին Ընդհանուր ժողովում ընդունված մարտավարությամբ, կամ կյանքի կոչեր նոր, ժամանակաշրջանի յուրահատկություններից բխող, առավել կենսունակ մարտավարություն:



Տուրբախ

Կուսակցության գործունեության առավել արմատական նշանակություն ունեցող, առավել ևս՝ մարտավարական, հարցերի վերաբերյալ իրավասու էր որոշումներ կայացնել ՀՅԴ Ընդհանուր ժողովը կամ, եթե ծրագրային հիմնարար դրույթներին չէր վերաբերում, ՀՅԴ Բյուրոն:

1895 թ. սկզբներին գումարվում է ՀՅԴ կոմիտեների ներկայացուցիչների Ընդհանուր-ռայոնական ժողովը: Քանի որ Արևմտյան Հայաստանում տիրող իրավիճակի ծայրահեղ լարվածության պատճառով նպատակահարմար չէր, որ ՀՅԴ կառույցների ներկայացուցիչները հեռանային իրենց շրջաններից, ուստի ՀՅԴ բյուրոյի որոշմամբ Ընդհանուր-ռայոնական ժողովի աշխատանքներին հրավիրվել են մասնակցելու ընդամենը 12 շրջանների ներկայացուցիչներ⁷:

Ի դեպ, այդ ժողովը ժամանակին թեպետ կոչվել է Ընդհանուր, բայց քանի որ նրա աշխատանքներին չեն մասնակցել կուսակցական բոլոր մարմինները, ապա այդ պատճառով մնում է որպես ռայոնական ժողով:

Չնայած հանգամանքների թելադրանքով այդ ժողովին մասնակցել են ՀՅԴ կովկասյան մարմինների ներկայացուցիչները, բայց, հաս-

կանալի պատճառներով, ժողովականներն առավելապես քննարկել են այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են Հ.Յ. Դաշնակցության գործունեությանն ընդհանրապես և, մասնավորապես, Արևմտյան Հայաստանի խնդիրներին:

Թվում է, որ եթե Ընդհանուր-ռայոնական ժողովում քննարկվող հարցերն առավելապես վերաբերելու էին ՀՅԴ ընդհանուր և մասնավորապես Արևմտյան Հայաստանում գործող կառույցների գործունեությանը, ապա ժողովի գումարման հիմնական նպատակը պիտի լիներ ինքնապաշտպանության կազմակերպման խնդիրների քննարկումն ու համապատասխան վճիռների ընդունումը: Սակայն, ժողովի նյութերի և կայացրած որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն, կարելի է ասել, Դաշնակցության վերջին երեք տարիների գործունեության յուրօրինակ հաշվետվությունն էր, վերլուծությունն ու գնահատականը, իսկ Հր. Տասնապետյանի գնահատմամբ՝ «1895-ի ժողովը յետադարձ ակնարկով մը գնահատանք կընէ 1892-էն ի վեր կուսակցութեան ունեցած գործունեութիւնը...»⁸:

Հիմք ունենալով «Ժողովի նպատակը» բաժնի արձանագրությունը, կարելի է ասել, որ այդ ժողովը գումարվել է հետևյալ նպատակով.

1. Քանի որ շատ կարևոր էր կուսակցական կառույցների միջև առավել հստակ ու սերտ կապ ու փոխհարաբերություն հաստատելու խնդիրը, այդ պատճառով ժողովի նպատակն էր պարզել վերջին երեք տարիների ընթացքում կուսակցության մեջ ծագած մի քանի անորոշ հարցերը, կառույցների գործած սխալներն ու բացթողումները:

2. Անհրաժեշտ էր հաշվի առնել նախորդ տարիների փորձը, թույլ տված սխալներն ու կատարած ոչ օգտակար, ավելորդ գործողու-

7. Տե՛ս Դիան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 161:

8. Հ. Տասնապետեան, Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութունէն մինչեւ Ժ. Ընդհ. ժողովը (1890-1924), էջ 39:

թյունները, իրականացնել գլխավորը՝ «...գալ համաձայնութեան այն ընթացքի վերաբերմամբ, որ հարկատու է բռնել ներկայ բարդ հանգամանքներում, որպէսզի բոլոր խմբերի գործողութիւնների մէջ լինի համերաշխութիւն՝ Դաշնակցութեան վերջնական նպատակն - Տաճկահայաստանում աւելի կատարելիութեամբ հաստատելու համար»⁹:

Իհարկէ, ժողովում արձանագրվում է Արևմտյան Հայաստանում տիրող ծանրագույն ու տագնապալի կացութեան իրողութիւնը, բայց որոշակիորեն չի նշվում, թե ինչպիսիք քայլեր պիտի ձեռնարկի կամ գործնականում ինչ կարող է կենսագործել Դաշնակցությունը, եթե Սասունի ողբերգական դեպքերը կրկնվեն հայկական մյուս բնակավայրերում:

Մարտավարության հարցում նույնպէս չի կայացվում որևէ նոր որոշում: Կարելի է ասել, որ Դաշնակցության զինանոցում, որպէս գործող մարտավարություն (Միջոց-տարտիկան), մնում է 1-ին Ընդհանուր ժողովի կողմից ընդունված 11 կետից բաղկացած մարտավարությունը:

Այսուհանդերձ, ժողովում ընդունվում են մի շարք որոշումներ, որոնցից Արևմտյան Հայաստանում գործող կուսակցական կառույցների «Յեղափոխական գործունէութիւնը ու ժեղացնելու միջոցներ»-ից կարելի է առանձնացնել.

1. Կարևորելով Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում գործող կուսակցական գործիչների ներկայությունն ու գործունէությունը, ժողովը որոշում է. «Գործող ագենտների թիր բազմացնել. ամենակարևոր մեր անելիքներից մէկն է շատացնել Տաճկաստանում ղեկավարող, կազմակերպող ուժերի քանակութիւնը...»¹⁰:

2. Տարբեր շրջաններում գործող ՀՅԴ կառույցների միջև սերտ կապ ու փոխհարաբերություն հաստատելու և հարկավոր պիտույքները, օրինակ զենք ու զինամթերք, մի վայրից մյուսը տեղափոխելու համար անհրաժեշտ էր հների կողքին ստեղծել նոր ճանապարհներ ու կայարաններ:

Ժողովի որոշմամբ ամենակարևոր ճանա-



Նիկոլ Դուման

պարհները պիտի լինէին. «1. Դէպի Մուշ տանող, 2. Դէպի Վասպուրական, 3. Դէպի Ալաշկերտ-Վան»:

3. Օրվա կարևորագույն հրամայականը արևմտահայությանը զինելու, զենք ու զինամթերք ձեռք բերելու խնդիրն էր: Այդ նկատառումով ժողովի որոշումներից երրորդը՝ «Զենքի եւ դրամական միջոցների հայթայթումը» վերաբերում է հենց վերոհիշյալ խնդրին, որին ժողովը փոքր-ինչ ավելի մեծ ուշադրություն է դարձրել:

Որպէսզի այս հարցի վերաբերյալ կայացվեր իրատեսական ու ավելի օգտակար որոշում, նախ պիտի քննարկվեր և հաշվի առնրվեր այդ գործում կուսակցության անցած ուղու փորձառությունը իր դրական ու բացասական արդյունքներով ու հետևանքներով:

Դաշնակցության հիմնած ապակենտրոն կառույցները, հատկապէս՝ Արևմտյան Հայաստանում գործող, օժտված էին մի կարևոր առանձնահատկությամբ: Նրանք, ըստ էության մարտական կառույցներ էին: Այս առու-

9. Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 161:

10. Նույն տեղում, էջ 164:



Պետրոս

մով Արևմտյան Հայաստանում կազմավորվող ՀՅԴ խմբերի առաջնահերթ գործը նպատակաուղղված էր լուծելու զինման խնդիրը: Այդ հարցը Դաշնակցության գործունեությունում առավել կարևոր ու հրատապ նշանակություն է ձեռք բերում հատկապես 1895 թ., երբ ողջ հայության ու նրա ազատագրական պայքարն առաջնորդող կուսակցությունների գերխնդիրն է դառնում կանխել Օսմանյան կայսրության բռնապետության տակ գտնվող հայ բնակչությանը սպառնացող ջարդերը:

Քանի որ 1-ին Ընդհանուր ժողովից հետո վերոհիշյալ ժողովը իր ընդգրկումով և նշանակությամբ ՀՅԴ գործունեությունում փաստորեն երկրորդն էր, հետևաբար պետք է լուրջ քննարկման առարկա դարձներ Արևմտյան Հայաստանում ձևավորված կուսակցական կառույցների և արևմտահայության զինման հարցը: Իսկ իրականում, այդ հարցում հավատարիմ գտնվելով ՀՅԴ 1-ին Ընդհանուր ժողովի ոգուն և հաշվի առնելով կուսակցության իրական հնարավորությունները, Ընդհանուր-ռայոնական ժողովը փաստում է, որ ներկա պահին կուսակցությունը չի կարող զինել ժողովրդի մեկ տասներորդ մասն անգամ: Որպես պատճառաբանություն, ժողովը իր որոշ-

ման մեջ արձանագրում է հետևյալ փաստարկը. «Առաջին՝ ներկայ պայմաններում շատ դժուար է տեղացիների համար զենք գնել մոլեռանդ մահմետականներից: Երկրորդ՝ շատ անգամ գործին նուիրուած մարդիկ աղքատ լինելով՝ անկարող են ձեռք գցել կռուելու պարագաներ»¹¹:

Չնայած ժողովի որոշումների մեջ նշվում են զենք և զինամթերք ձեռք բերելու դժվարություններն ու միաժամանակ նաև անհրաժեշտությունը, սակայն չեն նշվում դրանց գնման նոր, առավել արդյունավետ միջոցներն ու եղանակները: Ամենայն հավանականությամբ այս կարևորագույն հարցի վերաբերյալ Դաշնակցությունն այդ ժամանակ կամ դեռևս չունեն հստակ դիրքորոշում և հնարավորություն, կամ դա կուսակցական այնպիսի գաղտնիք էր, որը ենթակա չէր հրապարակման:

Այսուհանդերձ, զինման, զենք ու զինամթերքի ձեռք բերման հարցում ժողովի որոշումների մեջ կան ուշագրավ տեսակետներ, որոնցից կարելի է առանձնացնել.

Ո՞ւմ պետք է տրվեր զենքն ու զինամթերքը:

1. Համաձայն ժողովի որոշման կուսակցության անմիջական պարտականությունն էր հեղափոխական խմբերին օգնելը: Այս որոշումը կուսակցության գործունեությունում այսուհետև ունենում է արմատական ու առաջնահերթ նշանակություն: Պիտի նշել, որ հեղափոխական խմբերին օգնելը կամ, ավելի ստույգ, մարտական ու զինատար խմբերի զինումն ու Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններ ուղարկելու մարտավարությանը Հ. Յ. Դաշնակցությունը հավատարիմ է մնում մինչև 1904 թ. Սասունի դեպքերի ավարտը:

2. Ձենքի տարածման գործում, ինչքան էլ համոզիչ չլինի, ժողովի որոշմամբ ՀՅԴ-ն պիտի ունենար օժանդակ դերակատարություն, բայց հնարավորության սահմաններում իրականացներ զենքի ձեռք բերումն ու տարածումը: Հարց է ծագում. եթե Դաշնակցությունը, ո-

11. Նույն տեղում:

րը ստանձնել էր հայության ազգային-ազատագրական պայքարն առաջնորդողի առաքելությունը և զինման հարցում ունենալու էր օժանդակ դերակատարություն, ապա ո՞վ և ինչպե՞ս պիտի լուծեր արևմտահայության համար կենսական նշանակություն ունեցող զինման հարցը:

Համաձայն ժողովի որոշման, եթե այս հարցում Դաշնակցությունը նույնիսկ օժանդակ դերակատարություն ունենար, ապա զենք տարածելով «...դրանով մեծ զարկ տուած կը լինենք եւ նրան, որ ժողովուրդը ինքը կը ձգտի զինուել ...»:

Ժողովրդի զինումը թեպետ չափազանց կարևոր էր, բայց քանի որ Դաշնակցության հնարավորությունները, ինչպես իրավացիորեն նշվում է 1-ին Ընդհանուր, ապա նաև վերոհիշյալ ժողովում, հեռու էին լուծելու զինման խնդիրը, ապա ժողովուրդը պիտի ձգտեր զենք ձեռք բերել ու զինվել իր միջոցներով: Այս հարցում ՀՅԴ կառույցների պարտականությունն էր հնարավոր բոլոր միջոցներով օգնել ու աջակցել բնակչությանը:

3. Նկատի ունենալով անցյալի փորձը, ժողովը որոշում է, որ Երկրում գործող կուսակցական գործիչները պետք է ձգտեն հնարավորության սահմաններում ձրի զենք չբաժանել, հատկապես գործին մոտ կանգնած մարդկանց: Ըստ այդ որոշման զենք ձեռք բերելը «...վերապահում է ամէն մի գործող խմբի, որ հարկաւ, հետամուտ կը լինի թէկուզ քիչ, բայց լաւ զենքեր գնելու ձեռնահաս եւ փորձուած մարդկանց միջոցով...»¹²:

4. Չենք ու զինամթերք ձեռք բերելու համար ՀՅԴ խմբերը պիտի ձգտեն հաստատուն ու տևողական հիմքերի վրա դնել դրամի հարցը:

Քանի որ կուսակցության առջև ծառայած դժվարագույն խնդիրներից մեկն անհրաժեշտ ֆինանսական միջոցների հայթայթումն էր, այդ պատճառով ՀՅԴ կառույցները պիտի աշխատեին այդ հարցը հնարավորություննե-

րի սահմաններում մասնակիորեն լուծել նաև տեղերում: Համաձայն ժողովի որոշման, զենք և զինամթերքի գնման համար նախատեսվող գումարը նախ և առաջ պիտի մուծեին կուսակցությանն անդամագրվածները, ապա նոր միայն ժողովուրդը:

Այս առնչությամբ Ընդհանուր-ռայոնական ժողովը իր որոշմամբ ՀՅԴ խմբերին զգուշացնում է, որ դրամ ժողովելու ժամանակ չպետք է դիմել այնպիսի միջոցների, որոնք կարող էին վիրավորել մարդկանց զգացմունքները:

Այս որոշումը շատ կարևոր էր և խորապես մտածված ու կշռադատված: Հաշվի առնելով հայ ազգային կուսակցությունների և սեփական փորձը, Դաշնակցության համար արդեն

Մ Ի Չ Ո Ց Ն Ե Ը

«Հ ա յ Յ ե զ ա փ ո խ ա կ ա ն Դ ա շ ն ա կ ց ու թ իւ ն ք»
 ապստամբութեան միջոցով իր նպատակին հասնելու համար կը կազմակերպէ յեղափոխական խմբեր, որոնք կառավարութեան գէժ անընդհատ և զօրեղ կուէի հետ կուիւ կը մղեն նաև այն գնդհանուր պայմաններուն գէժ, որոնցմէ նեղած են միևնոյն ժամանակ թէ հայ և թէ օտար տարրերը (ասորիները, եզիզները, քրդերուն մէկ մասը, խաղաղ թիւրքերը և այլն): Այս ուղղութիւնն, իր ընդհանուր նշանակութենէն զատ, կարող է, եթէ ոչ միացնել, գէթ չէզոքացնել օտար տարրերու ընդգիմագրական ուժը:

Յեղափոխական խմբերը ի գործ դնելու են հետևեալ միջոցները.

1. «Դաշնակցութեան» գլխաւոր սկզբունքները, նրպատակը, ինչպէս նաև յեղափոխական գործին գիտակցորէն վերաբերութեան համար պրօպականտ ընել (քարոզել):
2. Կազմակերպել մարտական խմբեր, յատկապէս պարայիլ անոնց հետ վերայիշեալ խնդիրներով և գործով պատրաստել:
3. Ամեն միջոց ի գործ դնել թէ խօսքով և թէ գործով բարձրացնելու ժողովրդին յեղափոխական գործն ու ոգին:
4. Ամեն միջոց ի գործ դնել ժողովուրդը զինելու:
5. Կազմակերպել յեղափոխական կամփառներ և սերակապ հաստատել անոնց միջև:

12. Նույն տեղում, էջ 164-165:

գաղտնիք չէր, որ Արևմտյան Հայաստանում կուսակցական կառույցներ հիմնելու ու նրանց գործունեության շրջանակներն ընդարձակելու, խորացնելու համար հարկավոր էր շահել ժողովրդի համակրանքն ու վստահությունը: Այդ պատճառով կարևորելով ՀՅԴ խմբերի գործունեության մեջ բարոյա-հոգեբանական գործոնի դերն ու նշանակությունը՝ Ընդհանուր-ռայոնական ժողովը իր որոշումների մեջ ամրագրում է նաև վերոհիշյալ կետը:

5. Ընդհանուր-ռայոնական ժողովը կարևոր նշանակություն տալով քարոզչական աշխատանքներին, հրահանգում է ՀՅԴ բոլոր խմբերին կազմել խմբագրական մասնաժողովներ ու Բյուրոյի միջոցով կուսակցության պաշտոնաթերթ «Դրօշակ»-ին մշտապես ուղարկել նյութեր և դրանցում բարձրացնել այնպիսի հարցեր, որոնք ունեն հեղափոխական նշանակություն:

Բացի դրանից, «...տեղական խմբերը պիտի աշխատեն թուրքիկ թերթերով «Հայ Յեղափոխական Դաշնակցության այսինչ Դիդ» ստորագրությամբ վառ պահել հասարակության հետաքրքրությունը դեպի յեղափոխական գործը»¹³:

Եթե նույնիսկ Ընդհանուր-ռայոնական ժողովը քննարկվող հարցերի վերաբերյալ ընդունելու համակողմանիորեն փաստարկված որոշումներ, ապա, այնուամենայնիվ, կարևորագույնը զուտ գործնական առումով այդ որոշումների կենսագործումն էր: Ի՞նչ կարող էր անել և ինչի՞ էր ընդունակ Դաշնակցությունը ոչ թե որոշումներ կայացնելիս, այլ գործնականում:

Դաշնակցությունը հիմք ունենալով նախորդ տարիների փորձառությունն ու 1-ին Ընդհանուր և 1895 թ. Ընդհանուր-ռայոնական ժողովի որոշումները, պիտի իր գործունեությունը կենտրոնացներ կազմակերպելու

արևմտահայության ինքնապաշտպանությունը, իսկ Հր. Տասնապետյանի սահմանմամբ՝ «...կը նախապատրաստեր յետագայ 5-6 տարիներու յեղափոխական-մարտական գործունեութիւնը, յեղափոխական քարոզչութիւն, կազմակերպութեան ծաւալում, մարդուժի եւ զինամթերքի փոխադրութեան գիծերու հաստատում, ժողովրդի զինում, ֆէտայական թէ տեղական-մարտական խումբերու կազմութիւն, ինքնապաշտպանութեան կամ ժողովրդի պաշտպանութեան կոչիւնը՝ յատկապէս 1895-96 թուականներու համիտեան կոտորածներու շրջանը»¹⁴:



«Դրօշակ»-ի առաջին խմբագրատունը, Ժնև

13. Նույն տեղում, էջ 165:

14. Տասնապետեան Հր., Հ. Յ. Դաշնակցութեան յեղափոխական-մարտական գործունեութիւնը, էջ 19-20:

Արամ Մանուկյան.

ֆաղափական լիդերի հոգեբանական դիմանկարի առաջ

Սոֆյա Ավագյան

Հոգեբանական գիտությունների թեկնածու



Արամ Մանուկյանը ոչ միայն հայոց ազգային-ազատագրական շարժման մեծագույն դեկավարներից մեկն էր, այլև, կարծում ենք, Հայաստանի քաղաքական պատմության այն կարկառուն քաղաքական գործիչներից, ում քաղաքական վաստակն անգնահատելի է այսօր, և որի քաղաքական գործունեությունը դեռևս բավականաչափ ուսումնասիրված չէ: Այսօր առավել քան արդիական է ոչ միայն հայ պատմական լիդերնե-

րի քաղաքական գործունեության ուսումնասիրությունը պատմաքաղաքական տեսանկյունից, այլև հայ քաղաքական լիդերության հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը, քաղաքական իրավիճակի և լիդերի հոգեբանական դիմանկարի համադրական վեր-

լուծությունը: Վստահ ենք, որ նման ուսումնասիրությունները կարող են նպաստել Հայաստանի Հանրապետության նորագույն քաղաքական պատմության և կառավարման ոճերի մշակմանը և նոր մոդելի ներդրմանը:

Սկսելով իր ազգային գործունեությունը դեռևս Շուշիի թեմական դպրոցում՝ Արամ Մանուկյանը (Սարգիս Հարությունի Հովհաննիսյան, 1879-1919) կարճ ժամանակում ձեռք բերեց բարձր հեղինակու-

թյուն թե՛ համախոհների և թե՛ պարզ ժողովրդի շրջանում: Ականատեսների վկայությամբ՝ բնակչության շրջանում քարոզչության գործը վստահված էր Արամին, որն ուներ համոզելու մեծ ձիրք, խոսում էր փաստարկներով և կարողանում համախոհներ հավաքել. «Երբ ես Կարս եկայ, որպես փրոփաքանտի կենդրոնական դեմք մնացեր էր Սերգեյը (Արամը), շրջապատուած ինձ պէսներով, որոնք թէև կը տեսնէին, կը հասկնային, բայց երբ գործը կու գար հասկցնելու դիմացինին, լեզունին փայտ կը կտրէր, կը ծանրանար: Ուստի լաւ էր որ մենք լռէինք եւ փրոփաքանտի գործը ձգէինք Սերգեյին»¹: Այսպես էր բնութագրում Արամի ճարտասանական տաղանդը Ռուբենը: Ռուբենի այս գնահատականի մեջ համոզվելու համար բավական է ընթերցել Արամի ելույթները, որով նա ոգևորում էր ազգին ու դրանով ձևավորում բարոյահոգեբանական այն մթնոլորտը, որ որոշ ժամանակ անց պիտի տար իր պտուղները և մի ամբողջ ազգի փրկելը լիակատար ոչնչացումից: Այսպես, երկու գոհված ազատամարտիկների նահատակման առիթով, երբ համատարած սուգ ու վիշտ էր տիրում, Արամը հայտարարեց. «Սիրելի՛ք, լացը,

սուգը նրանց համար չէ. նրանք նահատակուեցին եւ անմահութիւնը վաստակեցին: Լացը, սուգը մեզի համար է, որ խօսում ենք նահատակութիւնից, բայց վախենում ենք վաստակել զայն...»: Այո՛, կարծում ենք, ստեղծված իրավիճակը թելադրում էր քարոզչության հենց այս ոգին ու թիրախները, լիդերի հեռատեսությունը միտված էր դեպի ապագա՝ կանխատեսելու, որ միայն զենքով ու բազմաթիվ զոհերով է հնարավոր փրկվել: Նման ոգևորող ելույթներն ու նաև անձնական խիզախության օրինակներն էին չեզոքացնում ժողովրդի մեջ անկումային տրամադրությունները, և ինչպես շատ դիպուկ բնորոշել էր Ռուբենը. «Սերգեյը իր նպատակին հասած էր՝ պատրաստած էր բոլորը մատաղ ընելու»²: Օժտված լինելով կամային բարձր հատկանիշներով, հռետորական ձիրքով և կազմակերպչական հմտություններով՝ Արամը բուռն գործունեություն ծավալեց Արևմտյան Հայաստանում: Անհրաժեշտ է ընդգծել Արամ Մանուկյանի՝ որպես քաղաքական գործչի անձնային հատկանիշներից թերևս ամենակարևորներից մեկը. իր ամբողջ քաղաքական գործունեության ընթացքում Արամը երբեք չի խորշել օգտագործել բոլոր կարող ուժերին ընդհանուր գործի հաջողության համար, երբեք չի առաջնորդվել կուսակցական պատկանելությամբ և նեղ կուսակցական



շահերով՝ ընդհանուր ազգային կառուցողական գործի շահերը վեր դասելով անանցյալ այլ շահերից: Այս հատկանիշը կարմիր թելով անցնում է նրա կենսագրության ամբողջ ընթացքով՝ լինի դա Կարսը, Վանը, թե Առաջին Հանրապետության կառավարման շրջանը: Կարծում ենք, սույն հետազոտության ուղղվածությունից ելնելով՝ պետք չէ առանձնացնել Արամի կուսակցական և ազգային գործունեությունը, այլ դրանք դիտարկելով մեկ ամբողջական և միասնական գործընթացի մեջ՝ փորձել հասկանալ քաղաքական լիդերի վարքային մոդելների շարժառիթները:

«Վանում Արամը և նրա զինակիցները զբաղվում էին թե՛ դատական գործերով, ուր, ի դեպ, վայելում էին ոչ միայն տեղի հայ բնակչության, այլև այլազ-

1. Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1, Երևան, 1990, էջ 88:
2. Ն. ս., էջ 45:

զինների բարձր հարգանքը և ունեին ոլորտի գիտակների մեծ համբավ, այլ նաև կազմակերպում էին հասարակական կյանքի կարգ ու կանոնի ապահովումը: Ազգաբնակչությանը արգելվեց թաղերում օղի վաճառելը, հարբելը, թղթախաղը: Այդ քայլի նպատակը անհարկի միջադեպերի բացառումն էր: Պատասխանատվություն սահմանվեց կեղծ դրամ հատելու, թուրքերին ու քրդերին զենք-զինամթերք վաճառելու, գողության, այդ թվում՝ քրդերից ու թուրքերից կատարվող գողության համար: Այդ ամենը նպաստում էր հասարակական կյանքի առողջացմանը, թուրքական իշխանությունների միջամտության նվազմանը»³:

Լինելով զինված ապստամբության անհրաժեշտության կողմնակից ու նաև քաջ գիտակցելով, որ ազգային-ազատագրական պայքարում հայերը կարող են ապավինել միայն սեփական ուժերին, Արամի գործունեության ընթացքում, այնուամենայնիվ, եղավ մի շրջան, երբ նա սկսեց հանդես գալ հակասուլթանական բոլոր՝ թե՛ թուրքական, թե՛ քրդական ուժերի հետ համագործակցելու դիրքերից: Կարծում ենք, անվերապահորեն միտված լինելով ազատագրական ազգային շահի իրականացմանը՝ Մանուկ-

յանը «քաղաքական այս խաղով» նպատակ էր հետապնդում հենց առաջնահերթ կարգով լուծելու հայության իրավունքների խնդիրները: Այո՛, նա շեշտում էր, որ անթույլատրելի է հայերի ուժերը գերազնահատելը և թուրքական հեղափոխությունից հետո հետապնդել միայն ազգային շահեր, նա իր համախոհների հետ համոզված էր, որ անհրաժեշտ է այլազգի հեղափոխականների հետ համագործակցությունը, իսկ օգտագործելով նոր Սահմանադրությունը՝ նրանք ձգտում էին լուծել հողային հարցը, հաստատել կարգուկանոն և ունենալ նաև գործադիր և օրենսդիր մարմիններում ներկայացուցիչներ, դրանով մասնակցել նոր հասարակարգի աշխատանքներին և վերջապես հասնել ազգերի իրավահավասարության: Այնուամենայնիվ, բոլորովին վստահ չենք, թե այդ մեծության գործիչը այնքան միամիտ էր, որ անվերապահորեն հավատում էր այդ ուժերի հետ բացարձակ դաշնակցությանը: Եվ ինչպես պատմության հետագա ընթացքը ցույց տվեց, «քաղաքական խաղի» բոլոր մասնակիցները օգտագործում էին միմյանց, իսկ հայերի կողմից զգոնության թուլացումը հանգեցրեց երիտթուրքերի կողմից կազմակերպված և իրականացված նմանօրինակը չունեցող ցեղասպանության:

Թե՛ Վանում, թե՛ Վասպուրականում Արամի քարոզչա-



կան աշխատանքները զուգորդվում էին կազմակերպական գործողություններով՝ սկսած զենք-զինամթերքի հավաքագրումից, վերջացրած ժողովրդի մեջ ցասումի, սեփական ուժերին վստահության, համախմբվածության ոգու ձևավորմանը. բոլորը զինվում էին: Արամը նրանց ներշնչել և համոզել էր, որ փրկությունը ինքնապաշտպանության մեջ է: Այստեղ էլ նա կարճ ժամանակ անց ձեռք բերեց այնպիսի հեղինակություն, որ ժողովուրդը նրան շնորհեց «փաշա» տիտղոսը:

Երիտթուրքական հեղափոխությունից հետո՝ 1909 թ. Արամը հեռացավ Վանից, իսկ 1912 թ. վերադարձավ, երբ երիտթուրքերի հակահայ քաղաքականությունը նոր թափ ստացավ և ծառայեց հայերի զանգվածային ջարդերի սպառնալիքը: Վանում նա ընտրվեց «Ազգային երեսփո-

3. Ասրյան Ա., Արամ Մանուկյան. Կյանքը և գործունեությունը, Երևան, 2009 թ., էջ 21:



խանական ժողովի նախագահ»։ «Ինչպես Ռոստոմը բովանդակ Դաշնակցութեան մէջ, Արամը ամէն ինչ էր Վասպուրականում. դրարոց, ազգային հաստատութիւններ, մամուլ, ժողով ու հանդէս, երիտասարդական շրջաններ, գաւառ, Ադթամար, յարաբերութիւններ կառավարութեան հետ – ամէն բանի վրայ տիրական էր Արամի միտքն ու հոգին»⁴։

Այստեղ Արամը մնաց՝ կազմակերպելու Վանի հերոսամարտը։ Ինչպես տեղեկանում ենք աղբյուրներից, Վանի հերոսամարտի «զինվորական և բարոյական ղեկավարությունը» ստանձնել էր Արամը, որն այդ ժամանակ ուներ անառարկելի հեղինակություն, ինչպես նշում էր Արմենակ Փախարյանը. «Զինվորական մարմնի մէջ Արամը,

հենված իր ներկայացրած կուսակցության ուժին և իր հմայքին, այդ մարմնի կենտրոնական անձնավորությունն էր, և ամենքը՝ թե՛ ժողովրդական հիմնարկությունների ներկայացուցիչներ, թե՛ օտարներ և թե՛ ընկերներն առհասարակ նրանից խորհուրդ էին հարցնում որևէ գործի համար»⁵։ Իսկ արդեն 1915 թ. մայիսի 5-6-ին, երբ Վան մտան Արարատյան կամավորական զույգը և ռուսական բանակի Բայազետի զորախումբը, գեներալ Ա. Նիկոլասին, բոլոր վանեցիների անունից, Արամ Մանուկյանը հանձնեց Վանի բանակիները։ Թեև Վանի ինքնապաշտպանության գործում մեծագույն ներդրում ուներ Դաշնակցությունը, սակայն Արամի ջանքերով այդ փրկության գործին լծվել էին նաև մյուս կուսակցությունները և ամբողջ բնակչությունը, և ինչպես հենց ինքը՝ Արամն էր ասում. «Կուսակցութիւնը չէ, որ գործ տեսաւ, այլ ամբողջ ժողովուրդը»։ Որպես բարձրագույն հեղինակություն, վստահություն և հարգանք վայելող մարդ՝ Արամ Մանուկյանը նշանակվեց Վանի նահանգապետ և լծվեց բազմաթիվ խնդիրների լուծման գործին։ Նախ՝ անվտանգության, ապա՝ օրինականության ապահովում, տրնտեսության վերականգնում, գաղթականների խնդիրների լուծում, ինչպես նաև ռուս զին-

վորների հնարավոր ոտընձգություններից ազգաբնակչության պաշտպանում և բազմաթիվ այլ հարակից խնդիրների լուծում։ Դիշտ ընտրված միջոցառումների և կազմակերպական միջոցների շնորհիվ նահանգը աստիճանաբար սկսեց զարգանալ և վերադառնալ խաղաղ բնականոն կյանքի։ Վանում Արամի կողմից ներդրված կառավարման մեխանիզմները կարելի է դիտարկել որպես, որոշ վերապահումներով, պետականության, պետական կառավարման մոդելի առաջին ծիլեր։

Արամ Մանուկյանը՝ որպես մեծագույն առաջնորդներից մեկը, հետագայում ստանձնեց նաև Երևանի պաշտպանությունը թուրքական ներխուժումից։ «Ազգային Խորհուրդը 1917 թուին հեռատեսութիւն ունեցաւ և Երեւան ուղարկեց շատ պատասխանատու գործով Արամին՝ աչքի առաջ ունենալով նրա գործ կազմակերպելու եւ այն վարելու բացառիկ կարողութիւնները՝ բացառիկ ծանր պայմաններում», - այսպես է մեկնաբանում Արամի մեկնումը Երևան Ա. Աստվածատրյանը⁶։ Իրավիճակը գնահատելով իրատեսական դիրքերից, հստակ հասկանալով սպառնալիքի

4. Ն. ս., էջ 29:

5. Վան-Վասպուրականի հերոսամարտը, էջ 24:

6. Աստուածատրեան Ա., Սարգսրատյաշին դասմաւիւնութիւնը: Յ. Թուրեանի «Սարգսրատյաշի հերոսամարտը» գրքին առթիւ, Պէյրուք, 1966, էջ 137:

իրական չափերը՝ Արամը անմիջապես անցավ պաշտպանությունը կազմակերպելու գործին. «Ամեն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթե նայող կայ, նայում է միայն յանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար⁷: Եթե ընդհանուր ուժերով ճակատ պահելու խօսք էլ է լինում, դա լոկ խօսք է՝ գուրկ իրական հիմքից ու անկեղծութիւնից: Հայերով ո՛չ ոք չի հետաքրքրում, շօշափելի օգնութիւն հասցնելու մտքով: Դրա հակառակը, կայ դաւադրական վերաբերմունք: Մենակ ենք եւ պէտք է ապահինենք միայն մեր ուժերին՝ թե՛ ճակատը պաշտպանելու եւ թե՛ երկրի ներսը կարգ հաստատելու համար»: Պաշտպանությունը կազմակերպելու ընթացքում կիրառվեցին համախմբման բոլոր հնարավոր միջոցները. բոլորը, առանց խտրականության, պարտավորված էին մասնակցելու ընդհանուր գործին. բոլորը միասնաբար պարտավոր էին հոգալ զինվորի ու թիկունքում մնացած նրա ընտանիքի մասին: Պետք էր խստագույն միջոցներ ձեռնարկել խուճապը կանխելու համար: Արամը մտածում էր ոչ թե

Երևանը հանձնելու, այլ այն պաշտպանելու մասին, ինչը միակ միջոցն էր հայությանը վերջնական ոչնչացումից փրկելու համար: 1918 թ. մարտի 24-ին Արամ Մանուկյանը ընտրվեց Երևանի նահանգի «դիկտատոր»՝ օժտված անսահմանափակ իշխանությամբ: Օրհասական պահին կարևորագույն խնդիրներից մեկը ժողովրդի ոգին բարձրացնելն էր, և դա Արամը քաջ գիտակցում էր. «Դուք պիտի իմանաք, որ ես անոյժ եմ առանց ձեզ: Հերոսը ինքը ժողովուրդն է եւ եթե ժողովուրդը պատրաստակամութիւն ունի... աշխատել ու փրկել հայութիւնը վերահաս կործանումից, ապա իմ ու ինձ նման շատերի աշխատանքը ապարդիւն չի անցնի»⁸: Ժողովրդի ընդհանուր ոգևորությունը կապված էր նաև առաջնորդի նկատմամբ ունեցած անվերապահ վստահությունից, ինչը Արամը ձեռք էր բերել ոչ միայն նմանօրինակ ոգեշնչող հորդորներով, այլև իր անձնական օրինակով, նմանը չունեցող անձնվիրումով. «Արամն է, որ լուսաւորում է բոլորիս ճամբան, եւ քանի նա կայ, կասկած չունեմ, յաջողելու ենք եւ լոյս աշխարհ ենք դուրս գալու այս... խոր վիրապից», - նշում է Ս. Օհանջանյանը⁹: Իսկ Հակոբ Տեր-Հակոբյանը այսպես է գնահատել Արամի հեղինակությունը. «...շնորհիւ իր բարձր հեղինակութեան՝ Արամի առաջնորդու-



թեամբ հայ ժողովուրդը, մի մարդու նման, ոտքի ելաւ ու ծառայաւ հզօր թշնամու դէմ իր ինքնապաշտպանութեան անհաւասար կռիւր հերոսաբար կերտելու համար»¹⁰:

Իրավիճակը օրհասական էր, երբ 1918 թ. թուրքական բանակը գրավելով Ալեքսանդրապոլը, Արաքս և Սարդարապատ կայարանները, սկսեց սպառնալ Էջմիածնին և Երևանին: Այդ օրերի մասին հիշում է Արշ. Աստվածատրոյանը. «Ըստ ամենայնի՝ բնական պէտք է համարուէր, եթէ Երեւանի, Արարատեան դաշտի հայութիւնը պարտուէր Սարդարապատի տակ... բոլոր պայմանները դասաւորուէլ էին յօգուտ տաճիկների եւ ի վնաս հայերի: Անգամ այսօր,

7. Ն. ս., էջ 41:

8. Ասրյան Ա., Արամ Մանուկյան, Կյանքը և գործունեությունը, Երևան, էջ 59:

9. Ն. ս., էջ 59:

10. Ն. ս., էջ 59:

տասնեակ տարիներ յետոյ, մարդ առանց ներքին դողի անկարող է յիշել նոյն օրերի յուսահատական պայմանները: Աշխարհից կտրուած, շրջապատուած անտուն ու անտեղ հարազատներով ու գաղթականներով, պարէնաւորման անմխիթար կացութիւն, հաղորդակցութեան ողբալի միջոցներ: Ո՛չ մի տեղից ոչ մի մխիթարական, յուսատու ձայն...»¹¹: Սակայն այդ անմխիթար օրերին, ինչպես նշում է Ս. Աֆանասյանը, «Արամը, ինչպես Վարդանը Ավարայրում, ի հայտ բերեց այդ հիշարժան հերոսապատմանը վայել քաջութիւն»: Հուսահատութեան պահին Արամը կարճ և դիպուկ կոչ արեց ժողովրդին, որից առավել այդ պահին անհրաժեշտ ոչինչ պետք չէր. «Կրկնութիւններ անելու այժմ տրամադիր չեմ և ժամանակ էլ չկայ ճառերով զբաղուելու: Ես եկել եմ յայտնելու ձեզ, որ թշնամին գրաւել է Սարդարաբադը և շարժում է դէպի Էջմիածին: Մեզ մնում է մի բան, կամ զենք վերցնել և դուրս գալ թշնամու առաջ և կամ կոտորուել ոչխարի պէս... Ով ուզում է ապրել, առանց բռալ կորցնելու, թող վերցնի զենքը, վերցնի նաեւ երեք օրուայ պաշար ու իսկոյն և եթ դիմէ ուսուցչական

սեմինարիայի շէնքը՝ ցուցակագրուելու և այնտեղից էլ ճակատ ուղարկուելու համար: Ես իմ ասելիքս վերջացրի, այժմ ձեզ է մնում անելիքը»¹²: Համընդհանուր ոգևորությունը ավելի էր ուժեղանում, երբ զինվորները, պարզ քաղաքացիները ամենուր տեսնում էին Արամին անձամբ գործ անելիս, նրանք զգում և հասկանում էին, որ իրենց նահատակութեան կոչ անողը ինքն է պատրաստ նահատակութեան, չկար խտրականություն. բոլորը կերտում էին իրենց փրկությունը. «...Ֆիզիքապէս անոր ներկայութեան մէջ կը տեսնուէր յոյսի և անակնկալ յաղթանակներու արշալոյսը»¹³: «Արամը շարունակ ոտքի վրայ էր: Հանգիստն ինչ է՝ մոռացել էր: Ռազմաճակատը նրա մտահոգութեան միակ առարկան էր... Անընդհատ յարաբերութեան մէջ էր զլիսաւոր շտաբի հետ, որ նրստած էր Վաղարշապատում: Արամը իր շնչով վարակում էր ամենքին: Ոչ ոք չէր խնայում հնարաւորը»¹⁴: Միասնականությունը, բարոյահոգեբանական մթնոլորտի հերոսականությունը և կազմակերպական աշխատանքները ինքնագոհաբար տվեցին իրենց արդյունքները. Սարդարապատում կերտվեց հայոց նորանկախ պետականությունը: Աննախադեպ և անհույս թվացող մի իրողություն, փրկված մի ազգ, որն ունեցավ իր անկախ պե-

տությունը: Եվ այդ պետության կերտման մէջ իր բացառիկ ներդրման համար Արամ Մանուկյանը իրավամբ արժանացավ Հանրապետության հիմնադրի կոչմանը: Նորանկախ պետության ստեղծումից հետո Արամը շարունակեց զբաղվել գործերի ղեկավարությամբ: Ժամանակաշրջանի վերաբերյալ այսպես է նշել գնդապետ Արարատյանը. «Երևանի շրջանում այն ժամանակ ամբողջ իշխանությունը հաստատուն կերպով գտնվում էր Արամի ձեռքում, որը լիակատար համերաշխությամբ գործում էր գեներալ Սիլիկովի և, զորքին ու ժողովրդին ոգևորող, Դրոյի հետ: Երևանի շրջանի ռազմական հզորության, տնտեսական և մնացյալ կարգի կազմակերպման Արամի փայլուն ընդունակությունը հայերին հնարավորություն տվեց զենքը ձեռքներից պահպանել փոքրիկ հողակտորը, միակ քաղաք Երևանը և Սուրբ Էջմիածնի եկեղեցին և, եթե հայերիս հետ հաշվի էին նստում այն ժամանակ և հաշվի են նրստում այժմ, ապա դա կարող են վերագրել բացառապէս երեք անձանց՝ Արամին, գեներալ Սիլիկովին և Դրոյին»¹⁵: 1918 թ. հուլիսի 19-ին Երևան ժամանեց

11. Ասուածասուրեան Ա., Արամը, «Հայրենիք», 1964, հուլիս, N 7, էջ 129:
 12. «Հորիզոն», 1918, սեպտեմբերի 6, N 178:
 13. Ասրյան Ա., Արամ Մանուկյան. Կյանքը և գործունեությունը, էջ 69:
 14. «Արամը», էջ 129-130:
 15. Ն. ս., էջ 74:

Հայոց կենտրոնական ազգային խորհուրդը և Հայաստանի Հանրապետության առաջին կառավարությունը՝ Հովհաննես Բազազնունու գլխավորությամբ: Արամ Մանուկյանը զբաղեցրեց ներքին գործերի նախարարի պաշտոնը: Սակայն անհրաժեշտ է հասկանալ, որ փաստացի Արամի ենթակայության տակ էին նաև հաղորդակցության, պարենավորման, լուսավորության, խնամատարության ոլորտները և անվտանգությունը: «1918-ին, երբ Հայաստանի օրինական կառավարութեան Բազազնունու դահլիճն էր կազմուած, փաստօրէն կառավարութիւնը մնում էր Արամը...»¹⁶: Ռուբեն Տեր-Մինասյանը այսպես է գնահատել այդ նախարարության գործունեությունը. «Արամի ժամանակ, ներքին գործոց նախարարութիւն ասելով պէտք էր հասկանալ պետութեան ֆիզիքական ոյժը եւ նրա կառավարական վարչամեթենան, մարմնացումը պետութեան եւ կուսակցական բարոյական հասկացողութեանց, օրէնքների գործադրման եւ պարտադրման միակ խողովակն ու միջոցը, կեդրոնը որտեղ ամփոփում էին Հայաստանը կազմակերպելու բոլոր ձգտումներն ու ճիգերը: Արամի ատեն ներքին



գործոց նախարարութիւնը կը ներկայացնէր ամէն ինչ...»¹⁷: Այդ շրջանում Արամ Մանուկյանի գործունեությունը զերծ չմնաց տարաբնույթ քննադատություններից: Կարծում ենք, դա պայմանավորված էր նրա ղեկավարած ոլորտի առանձնահատկություններով, գործերը վարելու միջոցների հետ կապված տարածայնություններով, ու նաև խաղաղ ժամանակներում կառավարման և իշխանության բաժանմանը հատուկ մարդկային հոգեբանությամբ, որը այդքան հատուկ է նաև մեր օրերին: Իր ամբողջ գործունեության ընթացքում Արամ Մանուկյանը դրսևորեց քաղաքական բացառիկ լիդերին բնորոշ անձնային առանձնահատկություններ՝ կամային բարձր հատկանիշներ, իրավիճակը ճիշտ և համակողմանի գնահատելու և հրատապ որոշումներ ընդունելու կարողություն,

որոշումների համար անձնական պատասխանատվության դրսևորում, ազգային շահի գիտակցում և ածանցյալ շահերի ստորադասում գերակա շահին, կազմակերպչական բացառիկ հատկանիշներ, բացառիկ քարոզչական ընդունակություն՝ համախմբվածության և միասնականության հոգեբանական ֆոնի ձևավորման համար, որոնց գումարած՝ անձնական անմնացորդ նվիրումի օրինակ, առանց որի, կարծում ենք, կիրառելի և արդյունավետ չէին լինի մյուս հատկանիշները: Երբ ժողովուրդը չի տեսնում իր և իր առաջնորդի շահերի միջև հակասություն կամ խտրականություն, առաջնորդի կոչերը վերածում է իրականության. կարծում ենք, սա քաղաքական իշխանության լեգիտիմության

16. Ռուբեն, հ. 7, էջ 312:
17. Ն. ս., էջ 312-313:

կարևոր անկյունաքարն է:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ Արամ Մանուկյանի ազգային-ազատագրական և քաղաքական գործունեության ընթացքը և նրա կողմից ընտրված և կիրառված ընդհանուր դեկավարման և կառավարման միջոցների կիրառումը հայոց պատմության մեջ այն բացառիկ երևույթներից մեկն է, երբ հետազոտելով դրանում ներգրավված բոլոր մեթոդները, կարող ենք ասել, որ նույնիսկ պետականություն չունենալու պայմաններում հնարավոր է խոսել քաղաքական լիդերության ֆենոմենի մասին, կառավարման ոճի և դրանում ներգրավված բոլոր ատրիբուտների մասին: Արամ Մանուկյանի՝ որպես քաղաքական լիդերի հոգեբանական կերպարը ամբողջացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել ժամանակաշրջանի բոլոր յուրահատկությունները՝ Թուրքիայում տիրող ներքաղաքական վիճակը, ազգին սպառնացող ֆիզիկական ոչնչացումը, երբ պետության մասին նույնիսկ մտածելը տիեզերական հրաշքների շարքից էր, Առաջին համաշխարհային պատերազմը և դրանով պայմանավորված աշխարհաքաղաքական փոփոխությունները, գլո-

բալ իրադարձություններից հայերի մեկուսացածությունը, պարենային ճգնաժամը, սովը, գաղթականները և համատարած հոգեբանական անկումը, և այդ ամենի հաղթահարման արդյունքում կերտվեց պետականություն: Կարծում ենք, սա այն եզակի դեպքերից է, երբ հայ ժողովրդի պատմության մեջ վերջապես գործեց «ճիշտ մարդը ճիշտ ժամանակին» սկզբունքը: Արամ Մանուկյան քաղաքական լիդերին համաշխարհային մեծության լիդերների հետ համեմատելիս ակրնհայտ է դառնում մի բացառիկ տարբերություն. նա միակն է, ով իր քաղաքական գործունեության արդյունքում ոչ միայն հիմք է դրել «նույնիսկ շանսեր չունեցող» պետականությանը՝ թեկուզև պատմական տարածքների փոքր հատվածում, այլև փրկել մի ամբողջ ժողովրդի ֆիզիկական և հոգևոր գոյությունը: Սա այն առանցքային գործոնն է, որով Արամ Մանուկյանը առանձնանալով պիտի մնա նաև համաշխարհային պատմության մեջ՝ դառնալով մերօրյա քաղաքականության դասագիրքու նաև օրինակ բոլոր այն ազգերին, որոնք դեռ պիտի կերտեն իրենց պատմությունը:

Նիկոլ Աղբալյանը Արամի մահվան կապակցությամբ իր խոսքում ասել է. «...մենք այսօր պիտի թաղենք մեծ մարդը, զոր հայ ժողովուրդը տուած է մեծ պատերազմի ընթացքին:

Ի՞նչ է մեծ մարդը – Մեծ մարդը ան է, որ գիտե ընթռնել ժամանակի հարցը և որո՞նք էին այս վերջին շրջանի մեծ հարցերը, որ համայն հայ ժողովրդին կը պատկանէին – հայ ժողովրդի պաշտպանութեան և ազատութեան հարցերն էին ատոնք... Վանը բոլորի յիշողութեան մէջն է, հոն Արամը հանդիսացաւ հայու հերոսական ոգին, փրկելով անոր ռազմական պատիւը: Երևանը վկայ էր այն հզօր ուժին, որ կար և կապրէր անոր մէջ, որ կազմակերպեց դիմադրութեան ուժը և այդ դիմադրութեան շնորհիւ կարողացաւ հիմք դնել Հայաստանի Հանրապետութեան, հայ ժողովրդի ազատագրութեան»¹⁸:

Աղբալյանի վերջին խոսքերը արդիական են մեր օրերում էլ՝ բոլորիս համար, բոլոր կառավարողների և բոլոր նրանց, ովքեր դեռ պատրաստվում են քաղաքական իշխանության. «Երբ գիշերը գայ, մտէք ձեր հոգիի սենեակը և խօսեցէք ձեր խղճի հետ և ըսէք, արդեօք աշխատե՞ր էք հայ ժողովրդի համար, ինչպէս Արամը, եղե՞ր էք այնքան անձնագոհ, որքան Արամը, տուե՞ր էք ձեր ամբողջ կեանքը հայ ժողովրդին, ինչպէս Արամը...»:

18. Աղբալյան Ա., էջ 105:

ՀԱՅՈՑ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒՍԱՆԵԼԻ ԷՉԵՐԻՑ.

ԱՐՇԱԿ Բ

Արման Ս. Եղիազարյան

Հայոց պատմության մեջ քիչ են այն առաջնորդները, որոնք անջնջելի հետք են թողել ժողովրդի հիշողության մեջ: Հայր այդպիսի առաջնորդների հետ է կապել իր ամենասրբազան ավանդությունները:

Սույն ակնարկում ներկայացվում է Հայոց թագավոր Արշակ Բ-ի (350-368) պետականակերտ գործունեությունը՝ ուղղված դժվարին վիճակում հայտնված պետության համախմբմանը, կազմակերպմանը, զարգացմանը, հզորացմանը, միջազգային հարաբերություններում նրա ծանրակշիռ դերի ապահովմանը և բանակաշինությանը: Չնայած հայ պատմագիրների վերաբերմունքը Արշակ Բ-ի և նրա գործունեության նկատմամբ միանշանակ չէ, նրանց հաղորդած տեղեկություններից կարողանում ենք հստակ կարծիք կազմել Հայոց թագավորի





Արշակունիներ

ընդգրկում պետականակերտ գործունեության մասին: Արշակ Բ-ի թագավորության շրջանն այս առումով դարագլուխ է Հայոց պատմության մեջ: Իզուր չէ, որ նրա անվան հետ է կապված հայի և հայկական հողի անքակտելի միասնության, հայի՝ հայրենի հողի վրա հզոր լինելու գաղափարը¹:

Այսօր՝ 16 և կես դարերի հեռվից, նայելով Արշակ Բ-ի թագավորության օրոք տեղի ունեցած դեպքերին, կարող ենք համոզված ասել, որ այն ժամանակների խնդիրներից շատերը արդիական են նաև այսօր:

Վերոհիշյալ առումներով Արշակ Բ-ի թագավորության շրջանն անգնահատելի դասեր է պարունակում Հայոց ներկայի համար²:

* * *

Արշակ Բ-ի ղեկավարած գործունեությունը: Հայտնի է, որ Հայոց Արշակ Բ թագավորի հայրը՝ Տիրանը (338-350), խաբեությանը գերեվարվել էր Պարսկաստան, կուրացվել ու բանտ նետվել: Երկրում անիշխանություն էր տիրում³:

Տիրանի որդի Արշակ Արշակունին, ըստ ավանդության, Հայոց թագավոր է հռչակվել Պարսկաստանում, որտեղ նա պահվում էր որպես պատանդ: Վերադառնալով հայրենիք՝ նա «հավաքում է ցրվածներին և թագավորում նրանց վրա»⁴: Պատմիչը հաղորդում է, որ Արշակ Բ-ի օրոք խաղաղություն հաստատվեց, իսկ պարսիկների ասպատակությունների հետևանքով փախուստի դիմած ու թաքնված մարդիկ վերադարձան իրենց բնակավայրերն ու խաղաղ բնակվեցին թագավորի հովանու տակ: «ԱՇխարհն

1. Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, Եր., 1987, էջ 259-261:

2. Ակնարկում բերված տեղեկությունները քաղված են Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» աշխատությունից (Եր., 1987), որտեղ մանրամասնորեն նկարագրված են Արշակ Բ թագավորի օրոք տեղի ունեցած իրադարձությունները: Արշակ Բ-ի թագավորության շրջանի դեպքերին անդրադարձել է նաև պատմահայր Մովսես Խորենացին (տե՛ս Հայոց պատմություն, Եր., 1981):

3. Փավստոս Բուզանդ, էջ 79-91:

4. Նույն տեղում, էջ 105:

էլ խաղաղվեց, բարեկարգվեց, կազմակերպվեց... և այնուհետև [Հայաստանի] բնակիչներից յուրաքանչյուրը խաղաղորեն վայելում էր իր սեղծածը»⁵: Փաստորեն, առաջին գործը, որ իրականացվեց Արշակ Բ-ի կողմից, պետական իշխանության ամրապնդումն էր և երկրի զարգացումը: Հայ ժողովուրդը սկսում է բարգավաճել:

Արշակ Բ-ն ի սկզբանե ձեռնամուխ եղավ Հայոց թագավորության հզորացման համար ամենակարևոր երաշխիքի ապահովմանը՝ Հայոց իշխանների համախմբմանը: Դեռևս Տիրան թագավորի օրոք, չընդունելով նրա անօրենությունները, Տայքի իրենց տիրույթներն էին հեռացել Մամիկոնյանները, որոնց էր պատկանում Հայոց թագավորության սպարապետի մականը: Առաջինը նրանց է միաբանության կոչում Արշակ Բ-ն: Հայոց թագավորը մյուս «մեծամեծերին էլ հնազանդության է բերում, նրանց գորքերը բաժանում [թագավորության] բոլոր կողմերում և Հայաստանի սահմանների վրա սահմանապահ կարգում»⁶:

Այնուհետև Արշակ Բ-ն սկսում է պետության կազմակերպման և պաշտոնների նշանակման գործը: «Եվ Հայաստան երկրի թագավորությունը նորոգվեց ու զարգացավ ինչպես առաջ՝ մեծամեծերն իրենց գահերում, գործակալներն իրենց աստիճաններում»⁷:

Արշակ Բ-ն պետական կարևորագույն պաշտոնները (գործակալություններ) բաժանում է նախարարական տներին՝ ըստ կառավարման ասպարեզում ունեցած ձեռքբերումների կամ պետությանը մատուցված ծառայությունների:

Նա հազարադատությունը հանձնում է «Երևաններին շենացող Գնունյաց ազգին, որդեսզի իբրև ամբողջ երկրի հազարադատներ՝ հոգասարությամբ խնամեն



Ներսես 1

աշխարհաւեն, աշխարհը կերակրող Երևաններին»: Ժողովրդի բարգավաճման համար Հայոց թագավորը հազարապետ է նշանակում, փաստորեն, այն նախարարին, որը շինականներին շենացնելու փորձառություն և կամք ուներ, որպեսզի նա, որպես համապետական պաշտոնյա, իր նախարարական տիրույթում իրականացրածը տարածի ողջ երկրում:

Հայոց սպարապետ է նշանակվում Վասակ Մամիկոնյանը՝ Հայոց պատմական ավանդության մյուս նվիրական կերպարը: Ըստ որում՝ **սղարադէտի դաւսոնը Մամիկոնյաններին հանձնվում է Հայոց թագավորության դաւսդանության գործում ունեցած ներդրման համար**, քանզի հայտնի էր, որ նրանք ճակատ առ ճակատ քաջորեն կռիվ էին մղել Հայաստանի համար, աներկ-

5. Նույն տեղում:

6. Նույն տեղում, էջ 107:

7. Նույն տեղում: Հայտնի է, որ Հայոց թագավորության համակարգում կարևոր տեղ էր զբաղեցնում նախարարների՝ ըստ գահերի (ինձա՛ աստիճաններ) բաժանումը, այսինքն՝ պետական աստիճանակարգը (հիերարխիա): Մյուս կողմից, կարևոր էր նաև գործակալությունների, այսինքն՝ պետական կարևոր պաշտոնների (հազարապետ, սպարապետ և այլն) համակարգը:

յուղ ու քաջասիրտ էին, ճակատամարտերում առաջինն էին, քաջանուն էին, բարեհամբավ ու բարեգործ և պատերազմական գործերում համարվում էին հաջողակ⁸:

Նման գործունեության արդյունքում ժողովրդի ընկալման մեջ Հայոց թագավորի գործունեության հետ է սկսում կապվել նաև ողջ թագավորության ճակատագիրը⁹:

Այնուհետև, Արշակ Բ-ն հավաքում է բոլոր նախարարներին ու մնացյալ մեծամեծներին՝ քննարկելու Հայոց նոր կաթողիկոսի հարցը: Ընտրում են Ներսեսին, որը Գրիգոր Լուսավորչի ծոռն էր: Չնայած նա զինվորական էր, բոլորի ընտրությունը կանգ առավ հենց նրա վրա, քանի որ նա մարդասեր էր, պարկեշտ, իմաստուն, անաչառ, իրավադատ, խոնարհ, աղքատախնամ: Սկզբում նա հրաժարվեց՝ իրեն այդ պաշտոնին անարժան համարելով¹⁰: Վճռական խոսքն ասաց Հայոց թագավորը, որից հետո Ներսեսին ուղարկեցին Կեսարիա՝ կաթողիկոս ձեռնադրվելու¹¹:

Ներսեսի կաթողիկոսությունը նշանավոր ժամանակաշրջան է Հայոց պատմության մեջ: Նա բարեգործություն էր անում և մղում մյուսներին՝ այդպես գործելու, նա աղքատներին օգնում էր և պահանջում, որ մյուսներն էլ այդպես անեն, կառուցում էր աղքատանոցներ, որպեսզի աղքատները կարիք չունենան մուրալու¹²: «Եվ բոլոր աշխարհին՝ թագավորի գլխավորությամբ, առհասարակ բոլոր մեծամեծներին և բոլոր նրանց, ովքեր իրենց մերձավորի վրա իշխանություն ունեին, նա կոչ էր անում գթասիրտ լինել իրենց ծառաների և կրտսերների (իմա՝ ավելի

ցածր խավի ներկայացուցիչներ - Ա.Ե.) վրա, ապօրինաբար և տարաբնույթ հարկերով նրանց չափից դուրս շնեղել, քանի որ նրանց համար երկնքում Տեր կա»¹³: Այսպիսին էր Ներսեսը՝ կաթողիկոս դառնալու ժամանակ, այդպիսին էլ մնաց իր ողջ գահակալման շրջանում: Նա Հայոց հզոր պետականության ջատագովն էր:

Հայ դասնագրության մեջ Արշակ Բ-ի թագավորության և Ներսեսի կաթողիկոսության շրջանի Հայաստանը բարեկարգության և բարգավաճության առումով նմանեցվել է Վերին կամ Երկնային Երուսաղեմին¹⁴:

Կարող ենք արձանագրել, որ Արշակ Բ-ի կողմից արվեց ամեն բան՝ Հայաստանը և հայերին միավորելու, Հայոց պետականությունն ամրապնդելու և հզորացնելու ուղղությամբ: Նա բոլոր պետական պաշտոնները բաժանեց ըստ արժանիքների՝ հաշվի առնելով պետական շահը: Հայոց հոգևոր տերը նույնպես առաջադրվեց նման հայեցակետից:

Հայոց թագավորությունը միջազգային հարաբերություններում: Արշակ Բ-ի օրոք աճում է Հայոց թագավորության կշիռը միջազգային հարաբերություններում:

Արսաֆին ֆաղափականության մեջ Արշակ Բ-ն առաջնորդվում էր Հայոց թագավորության ռազմերով: Նա երբեմն օգնում էր Հռոմի կայսերը, երբեմն՝ Պարսից թագավորին, երբեմն էլ՝ ձեռնդահ մնում որևէ մեկին օգնելուց¹⁵: Երբ Հռոմի կայսր Վալենտիանոս Ա-ն (364-375)¹⁶, հիշեցնելով պարսիկների հասցրած վնասները, Արշակին մի-

8. Նույն տեղում:

9. Նույն տեղում, էջ 175, 179, 201 և այլն:

10. Նույն տեղում, էջ 109-111:

11. Նույն տեղում, էջ 115: Հայտնի է, որ սկզբում Հայոց կաթողիկոսները ձեռնադրվում էին Կեսարիայում, սակայն Արշակ Բ-ն և նրա որդի Պապը, Հայոց եկեղեցին անկախ դարձնելու նպատակով, սկսեցին կաթողիկոսների ընտրությունը և ձեռնադրությունն իրականացնել Հայաստանում: Մասնավորապես, Արշակ Բ-ի կողմից Հայաստանում կաթողիկոս է ձեռնադրվել Չունակը (նույն տեղում, էջ 195):

12. Նույն տեղում, էջ 117-121:

13. Նույն տեղում, էջ 121-123:

14. Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Եր., 2001, էջ 81:

15. Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Եր., 1985, էջ 101:

16. Կամ՝ Վաղենտիանոս, աթոռակցությամբ Վալենտիոս (Վաղես) Բ-ի (364-378):



արանության կոչ արեց, վերջինս նույնիսկ հարկ չհամարեց պատասխանել: Այդ ժամանակ նա պարսից թագավոր Շապուհին (309-379), ելնելով քաղաքական նպատակահարմարությունից, ցույց էր տալիս, որ դաշնակցում է նրա հետ¹⁷:

Արշակ Բ-ի օրոք Հայոց թագավորության հետ դաշինքը մեծ կարևորություն ուներ Պարսից թագավորների համար: Երբ Շապուհ թագավորն իր մոտ հրավիրեց Արշակ Բ-ին, ըստ պատմիչի՝ վերջինս մեծարվեց և պատիվներ ստացավ: Նրան Շապուհը վերաբերվում էր ինչպես եղբոր, երկու թագավորները բազմում էին հավասար գահերի վրա, միատեսակ զգեստ հագնում¹⁸: Հայտնի է, որ Սասանյանների և Արշակունիների հարաբերություններն այնքան էլ բարեկամական չէին՝ կապված 226 թ. Սասանյան-

ների կողմից Հայ Արշակունիներին ազգակից Պարթև Արշակունիների գահի նվաճման հետ: Ուստի **Պարսից թագավորի վերաբերմունքը Հայոց թագավորին բխում էր միմիայն Հայոց թագավորության հզորությունից և միջազգային հարաբերություններում ունեցած խիստ ծանրակշիռ դիրքից**¹⁹: Վերջինս այնքան զգալի էր, որ Պարսկաստանի ու Հռոմի միջև ծագած պատերազմում Արշակ Բ-ն հանգիստ սպասում էր, վստահ, որ նրանք կդիմեն իր օգնությանը: Առաջինը ժամանեց Շապուհի պատվիրակը՝ հետևյալ նամակով. «Եթե կամենաս, եղբայր, և այս պատերազմում գաս ինձ օգնության, քո զորքով թիկունք կանգնես ինձ, եթե մեր կողմում լինես, մերը կլինի հաղթանակը»²⁰:

Հայոց թագավորության հզորության վառ

17. Մովսես Խորենացի, գիրք Գ, գլ. ԺԹ:

18. Փավստոս Բուզանդ, էջ 195-197:

19. Եղավ մի դեպք, երբ Հայոց թագավորը, գտնվելով Տիգրանում, մտավ շրջելու Շապուհի ախոռներից մեկը, և ախոռապետը նրան պարսկերեն «Հայոց այծերի թագավոր» անվանեց: Վասակ Մամիկոնյանը, որն ուղեկցում էր Արշակ Բ-ին, տեղնուտեղը սրախողխող արեց ախոռապետին: Ինչպես պատմիչն է նշում՝ «նա չկարողացավ տանել այն անարգանքը, որը հասցվում էր իր թագավորին. նա ավելի լավ էր համարում իր անխուսափելի մահը, քան իր տիրոջը հասցված վիրավորանքը կամ անարգանքը լսելը» (նույն տեղում, էջ 197):

20. Նույն տեղում, էջ 205-207:



օրինակը նաև Ներսես կաթողիկոսի՝ Հռոմում ձերբակալվելու և արքայազնի միջադեպին Հայոց թագավորի արձագանքն էր: Արշակ Բ-ն Ներսես կաթողիկոսին մի պատվիրակության հետ ուղարկեց Հռոմի կայսեր մոտ: Այնտեղ Հայոց կաթողիկոսը դավանաբանական վեճի բռնվեց կայսեր հետ, որի պատճառով նրան ձերբակալեցին ու արքայազնին²¹: Կայսրը սկզբում ցանկանում էր նրան մահապատժի ենթարկել, սակայն նրան զգուշացրեցին, որ «դրանք (իմա՝ Ներսես կաթողիկոսը և նրա հետ կայսեր մոտ ուղարկված հայ մի քանի մեծամեծները - Ա.Ե.) օտար ու հեռավոր երկրից ուղարկվել են մի հզոր թագավորի կողմից, մեծ տիրոջ պատգամավորներ են, չի կարելի նրանց վնաս հասցնել, քանի որ մեծ պատերազմ կծագի մեր և Հայոց մեծ թագավորի միջև»²²: Թեև կայսրը Ներսես կաթողիկոսին ազատ չի արձակում, սակայն, փոխարենը, Ներսեսի հետ մեկնածներին, ինչպես նաև Արշակ Բ-ի՝ Հռոմում պատանդ պահ-

վող եղբորորդիներին մեծամեծ նվերներով ուղարկում է Հայաստան: Նա հորդորում է Հայոց թագավորին՝ իրեն չմեղադրել²³:

Երբ Արշակ Բ-ն ստացավ նամակը, բարկացավ ինչպես կայսեր արածի, այնպես էլ իր նախարարների վրա, որ կայսեր նվիրած զանձերը բերել են իրեն: «Քարերը (իմա՝ թանկարժեք քարերը, որ ուղարկել էր կայսրը - Ա.Ե.) կայսեր վրա թափեք և ձեր վրա, որ բերել եք: Մենք էլ շատ քարեր ունենք՝ դրանք տվողի և ձեր՝ դրանց բերողների ատամները թափելու համար»: **Պետության հեղինակությանը հասցված այդ հարվածը, հասկանալի է, չէր կարող վճռական ֆայլերի չմղել Արշակ Բ-ի նման թագավորին:** Նա ասում էր, որ նման անպատվությանը չի դիմանա և վրեժխնդիր կլինի: Այնուհետև, նա հրամայեց Վասակ Մամիկոնյանին՝ զորքերը հավաքել և արշավել հռոմեական տիրույթների վրա: Վասակը Հայոց 260 հազարանոց զորքով արշավեց ու ասպատակեց հռոմեական տիրապետության

21. Նույն տեղում, էջ 127, 139-141:
22. Նույն տեղում, էջ 139:
23. Նույն տեղում, էջ 143, 165:

ներքո գտնվող Փոքր Ասիայի կենտրոնական շրջանները և հասավ Անկուրա²⁴: Շուտով Ներսես կաթողիկոսը վերադարձավ Հայաստան²⁵:

Հայոց բանակը: Արշակ Բ-ի օրոք Հայոց բանակն ամենահզորներից մեկն էր աշխարհում: Պատմիչն այսպես է ներկայացնում Հայոց բանակն Արշակ Բ-ի օրոք. «չորս հարյուր հազար զինվոր՝ կուռ և զինավառ, որոնք **ընօր ռազմիկներ էին, լի արիությանք և կռվում զոհվելու դասրաս:** Նիզակավորներ, սուսերավորներ, աղեղնավորներ՝ անվրեպ, կորովի, վաղրավորներ, սակրավորներ, **որոնք սովոր էին թեմամու դեմ աներկյուղ կռվել,** ամբողջ հեծելագործ՝ զրահավոր, պատենագեն, սաղավարտավոր, դրոշներով, բազմաձայն փողհարների նշանակիր խմբով»²⁶:

Այնուհետև, նկարագրելով Շապուհի գործերին ընդառաջ գնացող Հայոց զորքը, պատմիչը հաղորդում է, որ այն կազմված էր «ՄԻԱՍԻՐՏ, ՄԻԱԲԱՆ, ՄԻԱՄԻՏԶ» զինվորներից²⁷:

Մեկ այլ միջադեպի հետ կապված՝ պատմիչը հայտնում է, որ «Վասակ զորավարը ձեռքի տակ ուներ մոտ **վաթսուն հազար զինվոր՝ ընօր և դասերազմող,** որոնք միամիտք, միասիրտ էին՝ միաբան պատերազմելու, մարտնչելու իրենց կանանց ու որդիների համար, իրենց կյանքը նվիրելու աշխարհին (իմա՝ Հայաստան - Ա.Ե.) մինչև ի մահ, կռվելու իրենց բնիկ տերերի՝ Արշակունիների համար»²⁸:

Հայոց բանակի հզորության և մարտունակության վերաբերյալ կարելի է կարծիք կազմել Մծբինի մոտակայքում 359 թ. տեղի ունեցած ճակատամարտի նկարագրությու-

նից: Պարսկա-հռոմեական պատերազմի ժամանակ Շապուհը դիմեց Արշակ Բ-ի օգնությանը: Վերջինս հավաքեց իր զորքը՝ 400 հզ. զինվոր, և մեկնեց Շապուհին օգնության: Հայոց բանակը Մծբին քաղաքի մոտակա դաշտը հասավ այն ժամանակ, երբ հռոմեական զորքն արդեն դիրքավորվել էր, իսկ պարսկականը՝ դեռ ճակատամարտի դաշտ չէր եկել: Պարսից զորքին սպասելը ձանձրացրեց Հայոց զորքին: Հայ զինվորները պահանջում էին պարսիկներին չսպասել, այլ սեփական ուժերով հաղթել հռոմեացիներին: Հատկապես անհամբեր էր Վասակ սպարապետը: Ի վերջո Արշակ Բ-ն տվեց հարձակման հրամանը: Հայոց բանակը հարձակվեց հռոմեական զորքի վրա, ջախջախեց և կոտորեց մինչև վերջին զինվորը²⁹: Որոշ ժամանակ անց պատերազմի դաշտ եկած Շապուհը հայտարարեց, որ ինքը՝ ողջ պարսից զորքով, հազիվ թե կարողանար հաղթել հռոմեական զորքին³⁰:

Ճակատամարտից հետո Հայոց և Պարսից թագավորները թշնամանում են, և սկսվում է պատերազմը: Պատմիչը տասնյակից ավելի պարսկական արշավանքներ է հիշատակում, որոնք ամեն անգամ հետ են մղվում Հայոց զորքի կողմից: Վերջինս ի պատասխան նույնիսկ ներխուժեց Պարսկաստան և ավարի առավ նրա հյուսիսային որոշ շրջաններ³¹:

Արշակ Բ-ի թագավորության շրջանում Հայոց բանակի ու սպարապետի անպարտելիության իրողությունը ազգային հիշողությունը պատկերավոր ձևով պահպանել է ձերբակալված Հայոց սպարապետի և Պարսից թագավորի երկխոսության մեջ: Շապուհը կարճ հասակի պատճառով Վա-

24. Նույն տեղում, էջ 165-167: Անկուրան թերևս նույնական է ներկայիս Անկարա քաղաքին:
 25. Նույն տեղում, էջ 173:
 26. Նույն տեղում, էջ 205:
 27. Նույն տեղում, էջ 215:
 28. Նույն տեղում, էջ 223:
 29. Նույն տեղում, էջ 205-207:
 30. Նույն տեղում, էջ 207:
 31. Նույն տեղում, էջ 213-241:



սակ Մամիկոնյանին «աղվես» է անվանում՝ զարմանալով, որ այդքան տարի նա ջախջախել է պարսկական բանակներին: Վասակը պատասխանում է. **«այժմ տեսնում ես իմ կարճ հասակը և չես ըմբռնում իմ մեծությունը: Քանի որ մինչև այժմ ես եեզ համար առյուծ էի, իսկ այժմ՝ աղվես: Բայց մինչ ես Վասակն էի, ես հսկա էի: Մի ոտքս մի լեռան վրա էր, մյուսը՝ մյուս լեռան:**

Երբ աջ ոտքիս վրա էի հենվում, աջ լեռն էի գետնի տակ մտցնում, երբ ձախ ոտքիս վրա էի հենվում, ձախ լեռն էի գետնի տակ մտցնում»: Շապուհին հետաքրքրեց, թե որոնք էին այդ լեռները: Վասակն ասաց. «Երկու լեռներից մեկը դու էիր, մյուսը՝ Հունաց (իմա՝ Հռոմի - Ա.Ե.) թագավորը»³²:

Հայոց սպարապետից և գործի քաջագործություններից ազդված՝ Պարսից Շապուհ թագավորը հետագայում շատ անգամ կրկնում էր. **«Երանի նրան, որ Հայոց գործի տերն է, այդդիսի տիրապետ, միաբան և միամիտ գործի»**³³:

Հայոց թագավորի անվան սրբազան խորհուրդը: 360-ական թթ. կեսերին նախարարներից ոմանք լքում են Արշակ Բ-ին՝ պատճառ բերելով այն, որ հոգնել են անընդհատ պատերազմներից: Արշակ Բ-ն բանակցելու նպատակով Վասակ Մամիկոնյանի հետ մեկնում է Տիգրան: Շապուհը նրանց ուխտադրությամբ զրկում է ազատությունից՝ դնելով հսկողության տակ³⁴: Հայոց հողի հետ կապված նշանավոր պատմությունից հետո, ըստ որի՝ Արշակ Բ-ն վերագտնում էր իր արիությունը և հպարտությունը, երբ ոտք էր դնում Հայաստանից բերված և սենյակում սփռված հողի վրա³⁵, Շապուհը հասկացավ, որ Հայոց թագավորն այլևս երբեք իր հետ չի դաշնակցի: Արշակ Բ-ին շղթայեցին ու տեղափոխեցին Անհուշ բերդ³⁶:

Արշակ Բ-ն մեռավ հողատեր, ինչպես թագավորել էր: Հայոց թագավորը երբեք չխոնարհվեց: Նա ինքնասպան եղավ Անհուշ բերդում՝ գոչելով. «Վա՛յ ինձ, Արշակի՛ս, որ տեղից՝ ուր ընկա և ինչ օրի հասա»: Եվ պատահաբար ձեռքն ընկած դանակը սիրտը խրեց³⁷: Պատմիչն Արշակ Բ-ի մահը կոչում է «չար աղետ»³⁸:

32. Նույն տեղում, էջ 261:

33. Փավստոս Բուզանդ, էջ 309-311:

34. Նույն տեղում, էջ 251-255: Ըստ Մովսես Խորենացու՝ նախարարներն Արշակ Բ-ի դեմ ըմբոստացել են Արշակավանի պատճառով (Մովսես Խորենացի, գիրք Գ, գլ. ԼԴ):

35. Փավստոս Բուզանդ, էջ 259-261:

36. Նույն տեղում, էջ 261:

37. Նույն տեղում, էջ 317-319:

38. Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, Եր., 1996, էջ 53:

Արշակ Բ թագավորի անունն այնքան սրբազան խորհուրդ էր պարունակում հայտության համար, որ հետագայում պարսից գործի դեմ ճակատամարտող հայ զինվորները՝ թշնամուն խոցելիս, բացականչում էին. «**Հանուն ֆաջ Արշակի՛**» կամ՝ «Չոհեղի մեր Արշակ թագավորին»։ Շապուիթ զարմացել էր հայ զինվորների հավատարմության ու տիրասիրության վրա և հաճախ էր ասում, թե ինքն այսքան տարի բերդում պահում է Արշակ թագավորին, սակայն հայ զինվորները դեռևս նրա անունով են քաջալերվում կռվի դաշտում, նրան են նվիրում ամեն մի խոցված հակառակորդի։ Իսկ Մուշեղի գնդի զինվորները, ըստ Շապուիթ թագավորի՝ «համարում էին, թե նա (իմա՛ Արշակ Բ - Ա.Ե.) դարձյալ իրենց թագավորն է, կամ իրենց գնդի գլուխ է կանգնել պատերազմում, և իրենք ծառայում են նրան»³⁹։

Այդպիսի սրբազան խորհուրդ ուներ Հայոց թագավոր Արշակ Բ-ի անունը Հայոց բանակի զինվորների համար:

P.S. Արշակավանի դասը: Արշակ Բ-ի հրովարտակն ամբողջ Հայաստանից Այրարատի Կոզովիտ գավառում կառուցված Արշակավանում բնակության էր հրավիրում բոլոր ցանկացողներին։ Հրովարտակում ասված էր, որ նրանք, որոնք պարտքեր են կուտակել, ինչ-որ հանցանք են գործել, Արշակավանում կազատվեն դատ ու դատաստանից։ Շուտով ամբողջ Հայաստանից քաղաքում բազմահազար բնակչություն հավաքվեց⁴⁰։

Վաղ ավատատիրական Հայաստանում Արշակավանի կառուցումը երկրի աշխարհիկ և հոգևոր տերերի կողմից դժգոհությանը ընդունվեց։ Խնդիրն այն է, որ այս-

տեղ էին հավաքվում ավատատիրական հարաբերությունների զարգացման հետևանքով թշվառ վիճակում հայտնված մարդիկ, ինչպես նաև նրանք, ովքեր ցանկանում էին ազատ ապրել։ Դատելով հրովարտակից (թեև, անկասկած, դրա բովանդակությունը խեղաթյուրված է)՝ Արշակավանն ազատ քաղաք էր։ Այլապես, ինչով բացատրել պատմիչի կողմից այստեղ ապաստանած՝ սեփական ամուսիններին լքած կանանց, իրենց ամուսիններին թողած կանանց ու տղամարդկանց հիշատակությունը։ Արշակավանում հաստատվածների մեջ մեծ էր հատկապես ամուսիններին լքողների և նոր գույգեր կազմողների թիվը⁴¹։

Պետք է նշել նաև, որ Կոզովիտն ու այնտեղ կառուցված Արշակավանը արքունի տիրույթներ էին։ Նախարարների հիմնական դժգոհությունը, թերևս, այն էր, որ արքունի տիրույթներ էին հեռանում իրենց հպատակները։ Զանի որ այդ գործընթացը հովանավորվում էր թագավորի կողմից, նախարարներն այլևս կորցնում էին իշխանությունը հպատակների վրա։

Անհնար է գերազնահատել Արշակավանի կառուցման նշանակությունը և հետևանքները, բայց պարզ է մի իրողություն։ Դա Արշակ Բ-ի օրոք Հայոց թագավորության առաջին պառակտման պատճառը դարձավ, որը, ի վերջո, հանգեցրեց Հայոց թագավորի կործանմանը⁴²։

Անհրաժեշտ է դաս ֆաղել: Տեղին է հիշել հին սաղանագիրը. «Եթե ոչ ես ինձ համար՝ ո՞վ իմ փոխարեն. եթե ոչ հիմա՝ ե՞րբ»:

39. Փավստոս Բուզանդ, էջ 309-311:

40. Նույն տեղում, էջ 169-171, Մովսես Խորենացի, գիրք Գ, գլ. ԻԷ:

41. Փավստոս Բուզանդ, էջ 169:

42. Ըստ Մովսես Խորենացու՝ նախարարներից ոմանք Արշակավանի կառուցման պատճառով ապստամբեցին և դիմեցին Պարսից Շապուիթ թագավորի օգնությանը, որը Արշակ Բ-ի դեմ գործ ուղարկեց։ Նախարարները միացան նրան։ Արշակին այլ ելք չմնաց, քան Շապուիթի մոտ բանակցությունների մեկնելը։ Տիզբոնում նա ձերբակալվեց (Մովսես Խորենացի, գիրք Գ, գլ. ԼԴ):

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԼՈՌԻՍ - ՄԵԼԻՔՈՎ

Բժիշկ, գիտնական, ազգային, ֆաղափական, հասարակական գործիչ,

ՀՅԴ հիմնադիր-անդամ



Հովհաննես Չափարի Լորիս-Մելիֆովը ծնվել է 1862 թ. սեպտեմբերի 23 (հոկտեմբերի 5)-ին, Թիֆլիսում, ազնվական Լոռու-Մելիֆյանների ընտանիքում: Եղել է Ռուսաստանի ներքին գործերի նախարար, գեներալ Միխայիլ Լորիս-Մելիֆովի ազգականը և Ալեքսանդր Շիրվանզադեի աներորդին:

Միջնակարգ կրթությունը ստացել է Թիֆլիսում: 1882-88 թթ. սովորել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետում և կարդացել «Ընդհանուր դասկերպումներ Սանկտ Պետերբուրգում հիվանդանոցների և արժավային հումդիսալի կազմակերպման վերաբերյալ» թեմայով ավարտաճառ:

Եղել է Փարիզի մարդաբանների, գործնական և ճեսական բժշկության գիտական ընկերությունների անդամ: Փարիզում վերադասրասվել է մանրէաբանության գծով և միաժամանակ աշխատել Փարիզի ցուցահանդեսի բժիշկ: 1889 թ. վերադարձել է Թիֆլիս և աշխատել Միխայիլովյան հիվանդանոցի որոգելիսը և լաբորատորիայի վարիչ: 1890-91 թթ. հարկադրված է եղել ղեկավարական ավարտական ֆունկցիոններ հանձնել

Սանկտ Պետերբուրգի կայսերական ռազմաբժշկական ակադեմիայում և կարդալով ավարտաճառ ստացել է բժշկության դոկտորի ցիտոս: 1891-92 թթ. աշխատել է ռազմաբժշկական ակադեմիայի կլինիկական բաժնում, որդես աշխատես: Հեսագայում մասնագիտացել է մանկաբարձության, կանանց և մանկական հիվանդությունների գծով: 1892 թ. գործուղվել է Պարսկաստանի Ռեոս ֆաղափ՝ ղայֆարելու խուլերայի համաճարակի դեմ: 1895 թ. գործուղվել է Սանկտ Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիա, որեսը 1896 թ. դաոսդանել է ասեսնախոսություն. «Չլերի բորբոքումը ընդհանուր ախտաբանության ճեսանկյունից» թեմայով և ստացել բժշկագիտության դոկտորի երկրորդ ցիտոսը: Եղել է Թիֆլիսի Կովկասյան կայսերական բժշկական ընկերության ակտիվ անդամներից մեկը և հաճախակի զեկուցումներ կարդացել: 1897 թ. միության նիստում կարդացել է զեկուցում «Բորի ախտորոոումը և կանխարզելումը» թեմայով, որը սդագրվել է Կովկասի բժշկական ընկերության «դրոսոկուներում»: 1899 թ. գործուղվել է Սամարայի գուբերնիա՝ ղայֆարելու ժանսախտի համաճարակի

դեմ: 1906-08 թթ. աշխատել է Սանկտ Պետերբուրգի իշխանուհի Ելենա Պավլովնայի կլինիկական ինստիտուտում՝ որդես զեմսվոյական բժիշկների դասընթացի ասիստենտ: Հեղինակ է գիտական աշխատությունների և խոլերայի դեմ պայքարելու մասին դասագրքի: 1908 թ. դոկտորանտ Մեչնիկովի և Ռուի հրավերով աշխատել է Փարիզի Պասյորի ինստիտուտում: 1914-18 թթ. Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, կամավոր զինվորագրվել է ֆրանսիական բանակին և Արևմտյան ու Սալոնիկի ռազմաճակատների դաշտային հոսպիտալներում ծառայել որդես զինվորական բժիշկ: Մարտական ծառայությունների համար պարգևատրվել է Չինվորական խաչով: 1921 թ. դրությամբ աշխատելիս է եղել Պասյորի ինստիտուտում: Նրա խոսքը ծառայություններից մեկը համարվում է ռուսական բժշկության նվաճումների փարոզումը արևմտեվրոպական բժշկական հասարակայնության օրջանում:

Կուսակցական-հասարակական գործունեությունը

Հովհաննես Լոռիս-Մելիքովը 1877 թ. եղել է Թիֆլիսի բազմազգ նարոդնիկական կազմակերպության ակնառու անդամներից, իսկ 1878-83 թթ.՝ այդ կազմակերպության կենտրոնական կոմիտեի 9 անդամներից մեկը: 1889 թ. առաջ է փառել Հայկական հարցում Ռուսաստանից հրաժարվելու և դեռի Անգլիան կողմնորոշվելու խընդիրը: Հեսագայում միացել է «Երիտասարդ Հայաստան» կազմակերպության ձախակողմյան թևին: 1890 թ. ծանոթացել է Քրիստափոր Միֆայելյանի հետ, որը դարձել է Դաշնակցություն կուսակցության կնիքային, իսկ բժիշկը՝ այդ կուսակցության հիմնադիրներից մեկը: 1890 թ. ստեղծվել է ՀՅԴ-ն, որի ժողովները անցկացվել են Թիֆլիսի սարբեր մասերում: ՀՅԴ կենտրոնը հավաքվել է բժիշկ Հովհաննեսի սանը: 1890 թ. օգոստոսի վերջին հիմնադիր ժողովներում ձևավորվել է ՀՅԴ կուսակցության Կենտրոնական վարչությունը, որը բաղկացած էր 5 հոգուց, որոնց թվում էր բժիշկ Լոռիս-Մելիքովը: 1890 թ. նոյեմբերին Թիֆլիսի ոսկականությունը սկսել է հետաքրքրվել դաշնակցականներով և ձերբակալել նրանց: 1890 թ. հոկտեմբերին բժիշկը մեկնել է Սանկտ

Պետերբուրգ, իսկ 1891 թ. վերադարձել է Թիֆլիսում մեկնել Շվեյցարիա: 1891 թ. գարնանը ՀՅԴ հանձնարարությամբ, իբր բժշկական գործերով, մեկնել է Փարիզ, աղա ժնն՝ այդ ֆաղափների հայության հետ բանակցություններ վարելու նպատակով: 1892 թ. ապրիլի 14-ին Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Նելիդովի ուղարկած գաղտնի հեռագրով ցարական ոսկականությունը գտել է այն ռումբերի հետքերը, որոնք դասրասված են Ռուսչուկում և նախատեսված են Կ. Պոլսի համար»: Գործի մասնակիցների մեջ, ի թիվս ասերի, նեվում էր նաև բժիշկ Լոռիս-Մելիքովի անունը: 1892 թ. հունիսի 20-ին Թիֆլիսում հրավիրվել է ՀՅԴ կուսակցության առաջին ընդհանուր ժողովը, որին մասնակցելու համար ժամանել են 65 դասգամավորներ Ռուսաստանից, Պարսկաստանից, Օսմանյան կայսրությունից: Բժիշկը ոսկականներից աղահովազրվելու համար դիմել է փորձված հնարքի. ոսկականությանը հայտնել է, որ Փարիզից վերադառնալու կադակցությամբ դասրասվում է ընկերներին հրավիրել խնջույքի: Նախատեսված էր, որ ոսկականների անակնկալ այցի դեղում ֆաղափական ձառերը դեղ է վերածվելին բաժակաձառերի:

1894-98 թթ. գնվել է Փարիզում և Չարիֆյան ծածկանունով հողվածներ տղագրել «Դրոշակ» թերթում: 1904 թ. ամռանը Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկի կողմից ընդգրկվել է ազգային դասգամավորական խմբի մեջ, որի անդամներն էին արեղիսկոդոսներ Սվաճյանը և Այվաղյանը: Խմբի առաքելությունն էր լինելու գնալ Եվրոդա և հասնել այն բանին, որ մեծ տերությունները դաշտանեն սասունցիներին և իրականացնեն բարեփոխումներ Թուրքիայում: Նրանք լինում են Ֆրանսիայի, Անգլիայի, ԱՄՆ-ի դեկավարների մոտ, սակայն բացի ցավակցանից այլ բանի չեն կարողանում հասնել:

Բժիշկ Հովհաննես Լոռիս-Մելիքովը մահացել է 1931 թ. հուլիսի 10-ին, Փարիզում, ֆաղկեղից:

*Բժիշկ Հարություն Մինասյան
Հայ կենսագիրների ակումբի դեկավար*

„Droschak”
ORGANE
de la Fédération
Général. Arménienne

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak”
GENÈVE (Suisse)

«ՀԱՅ ՅԵՂԵՓՈՒԼԿԱՆ ՊԵՃՆԵԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

Պատմական զարգացում (Մեր աշխարհայեացքի հիմները)

Նիթական, տնտեսական ուժերը չեն միայն, որ շարժում են պատմությունը, այլ և մարդկային գիտակից կամեցողությունը, այլ և գաղափարական, իդեոլոգիական ազդակները, որոնք միշտ ու անպայման չեն վերածում տնտեսականին: Չի վերածում տնտեսական գործունի մանաւանդ այսպէս կոչուած բարձր իդեոլոգիան֊ փիլիսոփայութիւն, մետաֆիզիկա, կրօնական դօգմայնութիւն, գեղարուեստ: Այդ աշխարհում ևս, անտարակոյս - մանաւանդ կրօնի ու արուեստի մէջ - բազմաթիւ երևոյթներ դիրաւ բացատրելի են նիթական, արդիւնագործական պայմաններով, բայց ոչ բոլորը: Աստուածաբանական, փիլիսոփայական դարաւոր սպեկուլացիաները, միաստուածութեան, բազմաստուածութեան ու այլ կրօնական սիստեմների ու դօգմերի գոյացումը, փիլիսոփայական մեծ, համաշխարհային ուղղութիւնների ծնունդը - մատերիալիզմի ու իդէալիզմի, դօգմատիզմի ու սկեպտիցիզմի, բացիօնալիզմի ու էմպերիզմի - չի կարելի դարձեալ վերածել «ժամանակի» տնտեսական խարիսխներին, չի կարելի հռչակել, իբրև նրանց վերնաշէնք, արդիւնք, արտացոլում... Բով բովի, հին, պանծալի Յունաստանում կանգուն էին մատերիալիզմի և իդէալիզմի վարդապետութիւնները, ծնում էին, բարգաւաճում միևնոյն հասարա-

կական-տնտեսական պայմաններում և՛ Դեմոկրիտի, և՛ Պլատոնի ուսմունքները, որոնք այնուհետև ընթացան զուգահեռաբար ամբողջ միջնադարեան աշխարհի արկածների, արհաւիրքների վրայից, նման պայմաններում և նման մթնոլորտում առաջադիմեցին, զարգացան, առանց իրար վնասելու, յաղթահարելու և նման տնտեսական պայմաններում երկուսն էլ թևակոխեցին 19-րդ դարը, ուր մէկը փթթուեց և հասաւ գագաթնակէտին հեգելեան հոյակառոյց սիստեմի մէջ, միւսը՝ Ֆոխտի, Բիւխների, Մօլեշօտի և մանաւանդ Հեկկելի սպինօզայաշունչ սիստեմի մէջ:

Անկարելի է, կոպտօրէն միակողմանի և արսուրդ է՝ պատճառի և հետևանքի կապ հաստատել փիլիսոփայական այդ հոյակապ սիստեմների և արդիւնագործութեան ձևերի միջև, այսինքն դուրս բերել այդ սիստեմները, իբրև հետևանք տընտեսական արդիւնաբերութեան ձևերի: Անկարելի է և գռեհկօրէն միակողմանի՝ դուրս բերել Կանտի քննական փիլիսոփայութեան հսկայ շէնքը նրա բարոյական սիստեմը իր «կատեգօրիկ իմպերատիվներով», իբրև արդիւնք գերմանական բուրժուազիայի կամ թէ ուրիշ մի դասակարգի շահերի, մտահոգութիւնների... Այդպէս սակայն փորձեցին անել սիմպլիստ, պարզունակ «ուղղափառները» մանաւանդ ռուսների մէջ: Դա նոյնքան կոպիտ է, որքան Ֆոխտի ու Կարանիսի հռչակաւոր մատերիալիստական այլաբանութիւնը. «Միտքը բխում է ուղեղից, ինչպէս մեզը երիկամունքներից»:

Ի՞նչ օրէնքներով է ղեկավարում մարդկային ուղեղի այդ բարձրագոյն արտայայտութիւնը - փիլիսոփայական միտքը՝ իր դարաւոր ու արկածաւոր էւօլիւցիայի մէջ... Ոչ մի թէօրիա դեռ չի պատասխանել՝ շատ թէ քիչ բաւարար, այդ հարցումին: Մարքսիզմի «լուծումը» մի պարզ ու արգահատելի քաշքշուկ է, կարելի է ասել, և գեղարուեստի վերաբերմամբ: Եթէ անգամ աջողեն կրօնի, գեղարուեստի, բարոյագիտութեան զարգացումը վերածել տնտեսական, դասակարգային պատճառների - փիլիսոփայական մտքի զարգացումը պահպանելու է միշտ իր ինքնօրինութիւնը, ատօնօմիան...

Հայ Յեղափոխական Դաճակցության հիմնադրման 115 եւ 120-ամյակներին նվիրված գիսաժողովների նյութեր

«Հայ Դաս» հիմնադրամ, Երևան, 2011, 175 էջ



ՀՅԴ

վերջին զույգ տարելիցները իրավամբ լավ առիթ էին դարձյալ անդրադառնալու դարավոր ընթացքի հաղթահարած կուսակցության անցած ճանադարին՝ սկսած հիմնադրումից մինչև մեր բազմազբաղ օրերը, որոնց աննախադեպ դինամիզմը գնալով ավելի ու ավելի ֆիշ ժամանակ է թողնում ծանրանալու գաղափարաբանական հիմքերի արժարժումների, հիմնադրման դասմության նորա նոր ծախքերի բացահայտումների, այլ գաղափարախոսությունների հետ բանավեճերի վրա: Զույգ գիսաժողովները, նվիրված ՀՅԴ փառավոր հոբելյաններին, հենց այն զույգ դասուհանները եղան, որ հայ ֆաղափական ու գիսական մրսֆին հնարավորություն սկեցին դարձյալ ծավալվելու նւված խնդիրների տուրջ:

Ներկայացվող գիրքը (գիսաժողովների նյութերի ժողովածու) «Հայ Դաս» մասենաշարի երրորդ հրատարակությունն է: Նրանում տեղ են գտել գիսաժողովների մասնակից հայտնի դասմաբանների մեկ սասնյակից ավելի գիսական գեկու-

ցումներ, որոնցում վեր են հանված թե ՀՅԴ հիմնադրման անհրաժեշտության դասմական դրդադասճանները, թե նրա գաղափարական ակունքները եւ թե ծավալած գործունեությունը, որ երբեք անմասն չի եղել հայ ժողովրդին բաժին հասած ճակատագրից, իսկ դասմության առանձին ոլորաններին ուղղակի բախտորոշ դերակատարություն ունեցել նրա կյանքում: «ՀՅԴ գաղափարախոսության համամարդկային ակունքները», «ՀՅ Դաւենակցությունը եւ հայ կամավորական շարժումը Համաժխարհային դաստերազմի տարիներին (1914-1916 թ.թ.)», «ՀՅ Դաւենակցությունը Արցախի համար մղվող դայքարում (1917-1920 թ.թ.)», «ՀՅԴ-ն խորհրդային իշխանության դայքարում», «ՀՅ Դաւենակցության դերը արցախահայության ազգային-ազատագրական դայքարի կազմակերպման եւ ԼՂՀ կայացման գործում», «Հայ Յեղափոխական Դաւենակցությունը եւ դերակատարության վերականգնումը 1918 թվականին», «Արցախյան ազատագրական շարժումը եւ «Դեղի երկիր» կարգախոսը», «ՀՅ Դաւենակցությունը Սփյուռքում»՝ ահա ոչ լրիվ ցանկը այն գիտական զեկուցումների, որ տեղ են գտել սույն ժողովածուում:

Անուշտ ընթերցողների ուշադրությանը կարժանանան նաև ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-ֆարսուղար, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, դասմական գիտությունների դոկտոր, դոկտոր Վլադիմիր Բարխուդարյանի, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի սնորհն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, դասմական գիտությունների դոկտոր, դոկտոր Անոս Մելիքյանի, Երևանի դերակատար համալսարանի հայոց դասմության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, դասմական գիտությունների դոկտոր, դոկտոր Բարկեն Հարությունյանի, ԵՊՀ դասմության ֆակուլտետի դերակատար, դասմական գիտությունների դոկտոր, դոկտոր Էդիկ Մինասյանի ողջույնի խոսքերը՝ ուղղված երկրորդ գիտաժողովի կազմակերպիչներին ու մասնակիցներին, ինչպես նաև գիտաժողովների նյութերը հրատարակված տեսնելու նրանց ցանկությունը:

Իր ողջույնի խոսքում ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը մասնավորապես հնչեցրել է. «Հայ ազգային կուսակցություններից հասկապես Դաւենակցությունն ընտրեց իր ժողովրդին թուրքական լծից ազատագրելու անհավասար դայքարի ծանր ու դժվարին ուղին: ՀՅԴ-ն ամբողջովին նվիրվեց մի գաղափարի՝ գիտակցելով, որ այն զոհողություններ, անձնագոհություն է դառնում, եւ աներեք կատարեց իր առաքելությունը: Կուսակցության՝ մինչխորհրդային ժամանակների երեք տասնամյակների գործունեությունը սեփական ժողովրդի ցավերն ու հոգսերը դարձանելու, նրա ազգային ոգին բարձր դառնելու մասնակցությունը գործունեություն էր»:

ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի սնորհն Անոս Մելիքյանն էլ ներկաների ուշադրությունը հրավիրել է այն հարուստ դասմական նյութի վրա, որ ՀՅ Դաւենակցությունն այս տարիների ընթացքում ամբարել է, բայց որը տակալին ուսումնասիրության կարիք է զգում եւ հարկ է, որ դառնա հետագա հետազոտությունների առարկա. «Ամեն անգամ, յուրաքանչյուր կուսակցության, իսկ այս դեղքում՝ ՀՅ Դաւենակցության գործունեությունը վերլուծելիս տեսնում ես, թե որքան ահռելի արխիվային նյութ է դուրս մնացել ուսումնասիրությունից:

Հետազոտողին եւ դարգաղես ընթերցողին աղբեցնում ու զարմացնում են Ռայոնական կազմակերպությունների, կոմիտեների, Արևելյան եւ Արևմտյան բյուրոների, նրանց միջև կարծես եղած ներքին դայքարը, կուսակցության աղակետերն կառույցը, որի շնորհիվ հնարավոր եղավ դիմակայել ժամանակի փորձություններին: Ատենախոսությունները ֆննարկելիս մենք միտք ֆննարկական խոսք ենք ասում, թե այս արխիվը չի օգտագործվել, որ նյութերի մեծ մասը դուրս է մնացել հետազոտություններից: Մենք ունեցել ենք ֆաղափական մշակույթի նման հզոր շեմարան, բայց դրա մասին տեղեկանում ենք ժամանակ առ ժամանակ, նման միջոցառումների շնորհիվ»:

Գրքում տեղ են գտել նաև ՀՅԴ Բյուրոյի անդամ, դասմական գիտությունների թեկնածու Լևոն Մկրտչյանի բացման խոսքն ու ամփոփիչ ելույթը:

Ներկայացվող ժողովածուն, որի հրատարակման անհրաժեշտությունն ընդունել են գիտաժողովների բոլոր մասնակիցները, դասմական գիտությունների դոկտոր, դոկտոր Էդիկ Մինասյանի կարծիքով՝ հասկապես օգտակար ձեռնարկ կարող է հանդիսանալ ԵՊՀ դասմության ֆակուլտետի ուսանողների համար, ովքեր ի թիվս այլ առարկաների, ուսումնասիրում են նաև կուսակցությունների դասմություն:

Էդիկ Անդրեասյան

Վահագն Ջիվանյան



Ծնվել է 1973թ. Գյումրիում
 1990-1994թթ. ավարտել է Երևանի Գեղարվեստի ինստիտուտը
 1994-1999թթ. ավարտել է Սանկտ Պետերբուրգի
 համառոտական Գեղարվեստի, ճարտարապետության և
 ֆանդակագործության Ռեզինի անվան ակադեմիան



Ցուցահանդեսներ

- 1993թ.- Հայկական ներկադրանակ (Սոկիոլմ, Շվեդիա)
- 1994թ. - Ժամանակակից արվեստ (Դեսոյս, ԱՄՆ)
- 1997թ. - Հայկական արվեստ (Լառնակա, Կիորոս)
- 1998թ. - Ժամանակակից արվեստ (Տորոնտո, Կանադա)
- 2003թ. - Համազգային արվեստի ցուցահանդես (Նյու Յորք, ԱՄՆ)
- 2004թ. - Համազգային արվեստի ցուցահանդես (Նյու Յորք, ԱՄՆ)
- 2004թ. - «Ռոմանտիկ ռեալիզմ» ցուցահանդեսի մասնակից «Արամե» դասկերասահում
- 2004թ. - Եվրոպական արվեստ, (Ժնև, Շվեյցարիա)
- 2008թ. - Հայ գեղարվեստ և ֆանդակագործությունը (Վենետիկ, Իտալիա)



ԴՐՕՇԱԿ

Պ ա ս կ Ե ր ա ռ ա Կ





ПРОЩУ

